

18226

Պ. ԼԻՍՈՎԱԿԻ

ՊԱՏԵՐԱԶՄԻ  
ՀՐՁԻԳՆԵՐԻ ԼԻԳԱՆ

ՖԱԴՐԻՋԻԿԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՃՐԱՏՈՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ  
ԵԵՐԱԿԱՆ • 1940

327  
Ը-61

27 SEP 2006

Պ. ԼԻՍՈՎԱԿԻ

15 JAN 2010

327

L-61

✓

ՊԱՏԵՐԱՋՄԻ  
ՀՐՁԻԳՆԵՐԻ ԼԻԳԱՆ

օյլ

ջ

18226

10 3 MAY 2013



1560

40

П. ЛИСОВСКИЙ  
ЛИГА ПОДЖИГАТЕЛЕЙ ВОЙНЫ

Государственное издательство политической литературы  
Ереван • 1940

1939թվի դեկտեմբերի 14-ին Ազգերի Լիգայի Խոբ-  
հուրդը վորոշում կայացրեց Խորհրդային Միությունը Լի-  
գայից «Հեռացնելու» մասին։ Այդ խայտառակ վորոշումը  
վերջնականապես մերկացնում է պատերազմի իմակերպալիս-  
տական հրձիղներին, վորոնք ժընկի թատերաբեմում հան-  
դես են դալիս «խաղաղաբարների» դերում և կեղծավոր  
պացիֆիստական ֆրազներով քողարկում են՝ ամբողջ  
մարդկությունը սիստեմատիկ ու ոլորնաչափ կերպով պա-  
տերազմի արյունոտ հորձանքի մեջ ներդրավիելու վոճարագործ  
պլանները։ Ազգերի Լիգայի Խորհրդի դեկտեմբերի 14-ի  
վորոշումը ցույց է տալիս, վոր Ազգերի Լիգան վերջնակա-  
նապես գարձել է պատերազմի հրձիղների դործիք։

Յեվ դրանում վոչ մի զարմանալի բան չկա։ Ազգերի  
Լիգան առաջին իմակերպալիստական պատերազմի ծնունդն  
ե, նրան ստեղծել են հաղթող պետությունները—Անդիան,  
Ֆրանսիան և նրանց դաշնակիցները։ Նույն այդ վերածնված  
իմակերպալիստական ըլոկը փորձում է դաշլանիզայի  
յենթարկել կենդանի դիսկը—Ազգերի Լիգան, ձդտելով նրա  
միջնորդ փոքր յերկրները պատերազմի հնոցի մեջ ներդրա-  
վել, նոր համաշխարհային իմակերպալիստական պատերազմ  
բորբոքել։

Ազգերի Լիգայի կանոնադրությունը Վերսալի պայմա-  
նագրի բաղկացուցիչ մասն ե, պայմանագրիր, վորն ստո-  
րադրվել է 1919 թ. հունիսի 28-ին և ուժի մեջ է մտել 1920  
թվի հունվարի 10-ին։ Ազգերի Լիգան պաշտոնապես դոյու-  
թյուն ունի սկսած Վերսալի պայմանագրի ստորադրման  
որից։ Ազգերի Լիգան ստեղծողներն են յեղել այն ժամա-  
նակվա յիրեք զեկավար իմակերպալիստական դործիչները—  
Վուդրո Վիլսոնը (ԱՄՆ), Լույդ-Ջորջը (Անգլիա) և Կիե-  
մանսոն (Ֆրանսիա)։ «Մեծ յեռյալը» ինքնիշխան կերպով

անորինում եր հաշտության կոնֆերենցիայի աշխատանքները և ջանում եր կամքը վաթաթել ամբողջ աշխարհի վզին:

Հիգայի կանոնադրության ներածությունն ասում են, վոր Ազգերի Լիգան ստեղծվում է «միջազգային համագործակցությանը նպաստելու և միջազգային խաղաղությունն ու անվտանգությունն ապահովելու» նպատակով: Սակայն այդ հանդիսավոր դեկլարացիան լոկ ցուցանակ եր, վորի հետում կողմնակի աչքերից թափնված եյին Լիգայի իրական նպատակները:

Իսկ վորո՞նք եյին Ազգերի Լիգայի այդ իրական նպատակները: Դրանք համանալու համար պետք է մտարերել, թե ԵԵՎրոպայում քաղաքական ինչպիսի դրություն դոյցություն ունեց համաշխարհային պատերազմի վերջերին և հաշտության կնքումից անմիջապես հետո:

Չորս տարի և յերեք ամիս տևած արյունուտ սպանդից հետո, վորն անառելի զոհեր պատճառեց մարդկությանը, անդլո-Փրանսական բլոկը (վորին առաջին յերեք տարիներում եր ցարական Ռուսաստանը, նույնպես և իտալիան, վորն այդ բլոկին հարեց պատերազմի առաջին տարում, և ԱՄՆ-ը, վորը բլոկին միացավ պատերազմի վերջերին միայն) վճռական հաղթություն տարավ Գերմանիայի զլիսավորած կենտրոնական պետությունների գեմ: Սակայն «հաղթողները» ևս ուժասպառ լինելու սահմանումն եյին գոտնվում: Ծխացաղ ավերակներով ծածկված Յելրու պան անլուր ավերածության պատեր եր ներկայացնում: Միլիոնավոր ընտանիքներ կորցրել եյին իրենց կերակրողներին. ինչպես հաղթված յերկրների, նույնպես և հաղթող յերկրների ժողովրդական մասսաներն ուժասպառ եյին յերկրանքների և տառապանքների բեռի տակ, զեր անառելի զրկանքների և տառապանքների վեռի տակ, վոր առաջացել եյին յերկարատե արյունահեղ պատերազմի չնորհիվ: Ժողովրդական մասսաներում կուտակվել եր անսահման ատելություն արյունուտ սպանդի հանցավորների անսահման ատելություն արյունուտ սպանդի վերաբերմամբ: Առանձնապես ուժեղ եր այդ ատելությունը զինուրների մեջ, վորո՞նք յերկար ամիսներ ու տարիներ թաղված եյին խրամատներում, վորտեղ նրանք ամեն դուպե սպա-

սում եյին մահվան: Ռուսաստանում սոցիալիստական Հեղափոխության հաղթությունը 1917 թ. նոյեմբերին՝ բացեց ՅԵՎրոպայում հեղափոխությունների առաջին շրջանը: Պարտված յերկրներում (Գերմանիա և Ավստրի-Հունգարիա) և հաղթող յերկրներում (Ֆրանսիա և Անգլիա) 1917 և 1918 թվերին տեղի ունեցան մի շարք հեղափոխական առստամբություններ, քաղաքական գործադրություններ և զինվորների խոռվություններ: Կառավարող դասակարգերը տեսնում եյին, վոր աշխատավորական ամենալայն մասանների համբերությունն սպասվում է և վոր մոտ և ժամը. յերբ նրանք պատասխանատվության կկանչեն վոճարադրությունների ապանդի հանցավորներին: 1

Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության հաղթությունը 1917 թ. նոյեմբերին՝ բոլոր ժողովուրդներին յեւք ցույց տվեց իմպերիալիստական պատերազմի կոչմարից: Բոլշևիկներն ամբողջ աշխարհի առջև մերկացրին պատերազմի իմպերիալիստական, զալթողական բնույթը: Նրանք հրապարակեցին իմպերիալիստական պետությունների զաղանի պայմանագրերը, վորո՞նք յերեան եյին հանում իմպերիալիստական զիշտիչների իմպերիալիստական պշանները: Բոլշևիկներն անխնա նշավակում եյին իմպերիալիստական լողունղները «պատերազմ մինչեւ հաղթական վախճանը» և «հաղթական հաշտություն», լողունղները, վորո՞նք հիմնված եյին հակառակորդին կողոպտելու վրա: Հաշտության իմպերիալիստական ծրագրին բոլշևիկները հակառակում եյին իրենց զեմուկրատական ծրագրիը, վորին պահունակ կառուցում եյին տառապած ժողովուրդները:

1 Անտանտի իմպերիալիստական կառավարությունները, ցանկանալով ջլատել բոլշևիկների պայքարն ընդդեմ պատերազմի և ժողովրդական մասսաներին հեռացնել բոլշևիկների առաջարած դեմոկրատական հաշտության լողունղներից, դեմոկրատար մասսաների մեջ են նետում Ազգերի Ազգա ստեղծելու գաղափարը, Լիդա, վորը իրեւ թե պետք է վերջ դնի պատերազմներին և հավիտենական խաղաղություն ապահովի յերկրադիմի վրա: Ազգերի Լիգա ստեղծելու լողունղը պետք է քողարկեր Անտանտի կողոպտիչ նպա-

տակները և ամենալայն մասսաներին իմպերիալիստական  
պատերազմի կառքին դամեր:

Պատերազմը վերջանալուց հետո, յերբ միլիոնալոր  
դինուրներ ցրվեցին իրենց տները, տարածելով սաստիկ  
ատելություն գեղի արյունոտ սպանդի հանցավորները, տէ-  
րապետող դասակարգերի դրությունը չափազանց յերերուն  
դարձավ: «Հեղափոխության ուրվականը» գեռես վոչ ժի  
ժամանակ այսպես համառ կերպով չեր բաղնել կապիտա-  
լիստական Յելրոպայի դռները: Այդ մոմենտին բուրժուա-  
զիայի համար կյանքի ու մահվան հարց եր ժողովրդական  
մասսաների զայրությն ու կատաղությունը հանդարտեցնե-  
լը: Իսկ դրա համար անհամեշտ եր նրանց կազմալուծել,  
նրանց ներշնչել, վոր պատերազմի բնմում մասուցված  
անասելի զոհերն իրուր չեն անցել, — Անտանտի հաղթու-  
թյունը և Գերմանիայի ջախճախումը բաց են անում, իրեն-  
թե, նոր, լավագույն ժամանակաշրջան Յելրոպայի ու  
մարդկության պատմության մէջ, մի ժամանակաշրջան,  
յերբ չեն լինի այլևս պատերազմներ և արյունեղություն-  
ներ և յերբ կապահովվի խաղաղության և արդարության  
հաղթանակը:

Դ Աղջերի Լիդայի ստեղծումը պետք ե հանդստացներ  
յելրոպական ժողովուրդներին, վորոնք խաղաղության ծա-  
րավի եյին միքանի տարի տեած արյունալի սպանդից  
հետո: Աղջերի Լիդան պետք ե համոզեր ամենալայն մաս-  
սաներին, վոր առաջին համաշխարհային իմպերիալիստա-  
կան պատերազմը «վերջին» պատերազմը կլինի, նա պետք ե  
քողարկեր իմպերիալիստների՝ նոր պատերազմի պատրաստ-  
վելը: Այդիսով, Աղջերի Լիդան ստեղծվեց ամենից առաջ-  
վելը: Այդիսով, Աղջերի Լիդան ստեղծվեց ամենից առաջ-  
վելը ժողովրդական մասսաներին խարելու գործիք,  
բուրժուական դիկտատուրան աշխատավոր մասսաների  
բուրժուական ամրապնդելու գործիք: Այդ եր Աղջերի Լի-  
դայի առաջին հիմնական խնդիրը:

Սակայն գրանով Աղջերի Լիդայի դերը չեր սպառվում:  
Իմպերիալիստական պատերազմն ավարտվեց մի շարք բռնի  
պայմանագրերով, վոր հաղթողները փաթաթեցին հաղթ-  
վողների վզին: Այդ՝ «հաշտության» պայմանագրերի զորու-

թյամբ պարտիած յերկրները զբկվեցին իրենց տերիտորիա-  
ների դրամի մասից: Պարտիածների վրա գրվեցին ծանրա-  
դաւոյն կոնտրիբուցիաներ (այսպես կոչված սեպարացիոն  
վճարումներ): Նրանք զինաթափ արվեցին և կախալ վի-  
ճակի մեջ գրվեցին հաղթողներից: «Հաշտության» պայմա-  
նագրերը Յելրոպայում սահմանում եյին նոր քաղաքական  
սիստեմ: Անդինան ու Ֆրանսիան գարձան Յելրոպայի լիա-  
կատար տերերը և նշանակելի չափով ամրապնդեցին իրենց  
դիրքերը Յելրոպայից դուրս (Աֆրիկայում և Մերձավոր-  
Արևելյում): Սակայն անդլիսական ու ֆրանսական իմպե-  
րիալիստները յերկուշ եյին կրում, վոր հետզհետե ուժերի  
փոխարարերությունը Յելրոպայում կարող ե փոխվել և  
նրանց հեղեմոնիայի վերջը կհամնի: Այդ հանգամանքը  
հաշվի առնելով, նրանք ձգտում եյին վորքան կարելի յե-  
շատ պետություններ միավորել վերսալի սիստեմը պաշտ-  
պանելու ոլլատֆորմի վրա: Վորոնե Վերսալի պաշտպանու-  
թյան իմպերիալիստական բրոկ ել հենց պետք ե գառնար  
Աղջերի կիբան: Դա Աղջերի Լիդայի յերկրորդ խնդիրն եր:

Աղջերի Լիդայի յերրորդ խնդիրը պետք ե հանդիսանար  
անդլո-Փրանսական իմպերիալիստների դիրքերի ամրապնդ-  
ումը դադություններում: Առաջին իմպերիալիստական պատե-  
րազմի հետևանքով Անդլիսան ու Ֆրանսիան Գերմանիային  
ու Թուրքիային պատկանող հսկայական տերիտորիաներ  
զալթեցին Աֆրիկայում, Ասիայում և Խաղաղ օվկիանո-  
սում: Այդ տերիտորիաները Փորմալ կերպով Անդլիսայի ու  
Ֆրանսիայի զաղությային տերապետություններին միացնելը  
կմէ եր առնում վորոշ դժվարությունների: Նախ և առաջ  
գա ակնհայտորեն հսկայական «ազգությունների ինքնորոշ-  
ման» լողունգին, վորը պատերազմի ժամանակ Անդլիսան  
հրապարակ նետեց զեմադրության նպատակներով, և կմեր-  
կացներ Վերսալի և այլ «հաշտության» պայմանագրերի  
իմպերիալիստական, զավթողական բնույթը: Մյուս կող-  
մից, այդ տերիտորիաների բացահայտ գրավումը զիմա-  
դրություն առաջ կրերեր Անդլիսայի և Ֆրանսիայի մրցա-  
կիցների, մասնավորապես ԱՄՆ-ի կողմից:

Այդ գժվարությունը վերացնելու համար դիմեցին Ադ-

գերի Լիդայի սպնությանը: Գերմանիայից և Թյուրքիայից  
Խլած աֆրիկական, ասիական ու խաղաղ-ովկիանոսյան տե-  
բիտութաներն Ազգերի Լիդան վերցրեց իր խնամակալու-  
թյան ներքո և այսուհետեւ իր անոնից այդ տերիտորիանե-  
րի կառավարման «մանդատները» հանձնեց Անդիային ու  
Ֆրանսիային (մասամբ նաև Յապոնիային ու Բելիային):  
Փաստորեն վոչ մի տարրերություն չկար գաղութների և  
յենթամանդատային տերիտորիաների դրության միջև, բայց  
վերջիններին գաղութային դրությունը քողարկվում էր Ազ-  
գերի Լիդայի մանդատի պիտակներով: Այդպիսով, Ազգերի  
Լիդան այլայ գեպօւմ ևս անվիալան ու փրանսալան իմ-  
պերիալիզմի տիրապետության ամրապնդման գործիք հան-  
դիսացավ:

Վերսալի և այլ «հաշտության» պարմանագրերն անդա-  
մահատեցին Կենտրոնական Յեվրոպան՝ բաժանեցին մեծ  
թվով փոքր յերկրների: Յեվրոպայի այդ վերաբաժանումը  
կատարվել է իր թե հանուն ժողովուրդների ինքնորոշման  
սկզբունքի իրադուժման: Իսկ իրականում դա ամրողա-  
պես ծաղր եր այդ սկզբունքի վերաբերմամբ: Նոր սահման-  
ական գործ Յեվրոպայում համապատասխանեցին Անդիայի ու  
Ֆրանսիայի իմպերիալիստական շահերին, և վոչ թե ժողո-  
վուրդների ազգային շահերին: Դրա ցայտուն որինակն է  
հանդիսանում սրանական լեռաստանի ստեղծումը, վորի  
կարգի մեջ ելին մտնում ավելի քան 40% ազգային փոքրա-  
մանություններ: Հետվերսալյան Յեվրոպայում ընդամենը  
հաշվում ելին մոտ 40 միլիոն ազգային փոքրամանու-  
թյուններ, վորոնք գաժանորեն կեղեքվում ելին տիրապե-  
տող ազգերի կողմից և փաստորեն դժունվում ելին զաղութա-  
յին ժողովուրդների դրության միջ:

Այդ ազգային փոքրամանությունները Յեվրոպայում  
քիչ վտանգ չելին ներկայացնում Վերսալի քաղաքական  
սիստեմի կայունության համար: Անդիայի ու Ֆրանսիայի  
իմպերիալիստները դարձաւ դիմեցին Ազգերի Լիդային:  
Նրանք վերջինիս վրա դրին մի տեսակ «խնամակա-  
լություն» ազգային փոքրամանությունների վերաբեր-  
մամբ, փորձելով այդպիսով հաշտեցնել ազգային փոքրա-  
մանություններին Վերսալի սիստեմի հետ:

Նշանակելի չափով ազգային փոքրամանություններ  
ունեցող յելքուղական պետությունների մեծամասնությանը  
խոսում արվեց «ավտոնոմիա» տալ նրանց, իսկ Ազգերի Լի-  
դայի վրա դրվեց կոնտրոլ և հսկողությունն այդ պարա�-  
փորությունների կատարման համար: Գործնականում Ազգե-  
րի Լիդայի կոնտրոլ Փունկցիաներն այդ հարցում դարձան  
ուղղակի ծալրանք արդային փոքրամանությունների  
նկատմամբ, իսկ «ավտոնոմիան» մնաց թղթի վրա: «Աղ-  
դային փոքրամանություններին ավտոնոմ իրավունքներ»  
վերապահելու «յերաշխիքների» վերաբերյալ ամբողջ խաղը  
հետապնդում եր միայն մի նպատակ՝ խարել ազգային փոք-  
րամանություններին և նրանց հետ պահել իրենց ազգային  
իրավունքների համար մղող պայքարեց: Այդպիսով, Աղ-  
դերի Լիդան այս հարցում ևս հանդիսացավ ժողովուրդների  
մնշան և իմպերիալիստական վերսալյան սիստեմի ամրա-  
պնդման հումանոգ գործիքը, Յեվրոպայում անդու-  
ժրանսական հեղեմոնիայի իրականացման գործիքը:

Վերջապես չի կարելի չմատնանշել այն չափազանց խո-  
շոր գերը, զոր Ազգերի Լիդայի ստեղծման գործում խաղո-  
ցին իմպերիալիստական բուրժուազիայի հակախորհրդային  
ձգտումները: Ազգերի Լիդան ծառայում եր վորպես հակա-  
խորհրդային ամեն տեսակ ինտրիգների ու մեքենայություն-  
ների կենտրոնատեղի, վորպես Խորհրդային Հանրապետու-  
թյան գեմ խաչկրաց արշավանք նախապատրաստելու  
ոջախ: Շատ տարիների ընթացքում Ազգերի Լիդայի կու-  
լուարներում Յեվրոպայի իմպերիալիստական քաղաքակա-  
նության ամենակարևոր ներկայացուցիչները հյուսում  
ելին հակախորհրդային զանազան կոմբինացիաներ, մշակե-  
րով Խորհրդային Միության գեմ կոիվ մղելու պլաններ:  
Ազգերի Լիդան հետևողականորեն կիրառում եր ԽՍՀՄ-ի  
յելքուղական ու համաշխարհային քաղաքականությունից մե-  
կուսացնելու գիծ, ձգտելով չինական պարսպով անջատել  
Խորհրդային Միությունն արտաքին աշխարհայից և ամեն կերպ  
թուլացնել նրա միջազգային դիրքերը: Մի ամբողջ չարք քա-  
ղաքական հարցեր և կոնֆլիկտներ, վորոնք ամենասահի-  
նական կերպով ԽՍՀՄ-ի կենսական շահերն ելին չոշա-

փում (Ալանդական կղզիների, Վելնոլի, Մեմելի հարցը և այլն), վճռվում ելին առանց նրա մասնակցության: Հաձախ այդ հարցերի լուծման ժամանակ ամենակողիտ կերպով խախտվում ելին ԽՍՀՄ-ի տարրական իրավունքներն ու շահերը: Այդպիսով, Ազգերի Լիդան ստեղծվել եր նմանապես վրապես իմաստիալիստական պիտությաւնների հակախորհրդային ազքեսիայի գործիք:

Այդ ե Ազգերի Լիդայի—առաջին իմաստիալիստական պատերազմի ծնունդը հանդիսացողի—իսկական դեմքը: Ազգերի Լիդայի զիմանը կազմակերպողներից մեկը, վորությունի մասնակցություն է ցույց տվել նրա ստեղծման դործում, յեղել ե ամերիկյան Փինանսական կալիստալի ներկայացուցիչ Վուդրո Վիլսոնը, վորը ջանում եր զեկալարդերի խաղալ Փարբի հաշտության կոնֆերենցիայում: Ազգերի Լիդան, Վիլսոնի մտքով, պետք ե ամերիկյան իմաստիալիզմի արտաքին քաղաքականության դործիքը հանդիսանար, պետք ե նրա համար հեշտացներ կոնտրոլը յելքուականների վերաբերմքը, ողներ՝ ամերիկյան իմաստիալիզմին ամբարցնելու քաղաքական ու տնտեսական այն դիրքը, վոր նա զրավել եր համաշխարհային պատերազմի հետևանքով: Յելքուակայում ամերիկյան իմաստիալիզմի կատարելիք եքսպանսիօնի իր պլանները Վիլսոնը վարպետութեն քողարկում եր պացիֆիստական Փրազաբանությամբ, «ազգերի ինքնորոշման իրավունքի», «միջազգային արդարության», «ժողովուրդների յիղբայրության» վերաբերյալ լորունդներով և այլն: Այդ եր Վիլսոնի հոչակալոր 14 կետերի բնույթը, վորոնք պետք ե ամենալայն մասսաներից թագնելին իմաստիալիստական պատերազմի և Անտանտի ու ԱՄՆ-ի կողմից կենտրոնական պետությունների վկին փաթաթված պայմանադրերի զավթողական բնույթը: Ինչպես հայտնի յե, Վիլսոնի պլաններն Ազգերի Լիդայի վերաբերմամբ ձախողվեցին: Ամերիկյան բուրժուազիայի քաղաքականության մեջ հաղթանակեց «իզուլացիոնիզմի» տեհունցը, վորի հիմքն եր հանդիսանում ամերիկյան իմաստիալիզմի եքսպանսիան առաջին դեպի հարավային Ամերիկանուայան յեր-

ԿՐԹՆԵՐԸ: ԱՄՆ-ը այդպես ել հենց չմտալ Ազգերի Լիդայի մեջ:

Ազգերի Լիդայի՝ վորակն հաղթող պետությունների իմպերիալիստական քաղաքականության դործիքի՝ սպառիչ բնութաղիքը տվել ե ընկեր Ստալինը 1927 թվականին: Ոտարերկրյա բանվորական դելեգացիայի հետ ունեցած դրույցի ժամանակ տրված այն հարցին, թե ԽՍՀՄ-ն ինչո՞ւ չմասնակցում Ազգերի Լիդային, ընկեր Ստալինը պատասխանել ե.

«Խորհրդային Միությունը Ազգերի Լիդայի անդամ չե և չի մասնակցում Ազգերի Լիդային նախ և առաջ այն պատճառով, վոր նա չի ուղղում իր վրա պատասխանատվություն վերցնել Ազգերի Լիդայի իմպերիալիստական քաղաքականության համար, այն «մանդատների» համար, վոր Ազգերի Լիդան տալիս և զաղութային յերկրներ շահագործելու և կեղեցիլու համար: Խորհրդային Միությունը չի մասնակցում Ազգերի Լիդային, վորովհետեւ նա ամբողջությամբ ու լիովին դեմ և իմաստիալիզմին, դեմ և գաղութների և կախումն ունեցող յերկրների կեղեցմանը:

Յերկրորդ՝ Խորհրդային Միությունը Լիդային չի մասնակցում այն պատճառով, վոր նա չի ուղղում իր վրա պատասխանատվությունների համար, սպառազինումների աճման, նոր ուսումնական զաշնիների համար և այլն, վորոնք քողարկում ու սրբադրում ե Ազգերի Լիդան, և վորոնք չեն կարող չհասցնել նոր իմաստիալիստական պատերազմների: Խորհրդային Միությունը չի մասնակցում Ազգերի Լիդային, վորովհետեւ նա ամբողջությամբ ու լիովին դեմ և իմաստիալիզմին, դեմ և կանդնած իմաստիալիստական պատերազմներին:

Պերջապես, Խորհրդային Միությունը չի մասնակցում Ազգերի Լիդային, այն պատճառով, վոր նա չի ուղղում դառնալ իմաստիալիստական մեքնայությունների այն շիրմայի բաղկացուցիչ մաոը, վոր ներկայացնում ե իրենից Ազգերի Լիդան և վորոնց վերջինո քողարկում ե իր անդամների հեղահամբույր ճառերով: Ազգերի Լիդան «տեսակցության տուն ե» իմաստիալիստական պարագաւոխների հա-

ժար, վորոնք իրենց գործերը սարքում են կուլիսների հետևում: Այն, ինչ վոր խոսում են պաշտոնապես Ազգերի իրայում, դատարկ բարբաջանք է, վոր արվում ե քանվորերին խարելու նպատակով: Իսկ այն, ինչ վոր վոչպաշտոնապես անում են իմակերիսալիստական պարագլուխներն Ազգերի իրայի կուլիսների հետևում, դա իմական իմպերիալիստական գործ է, վորը փարիսեցիսարար քողարքում են Ազգերի Լիդայի շաղակրատ հոետորները: Ինչ դարմանալի բան կարող է լինել նրանում, վոր Խորհրդային Միությունը չի ուղղում անդամ ու մասնակից լինել այդ հակաժողովրդական կոմեղիային»<sup>1</sup>:

Ազգերի Լիդան Անդիհայի ու Ֆրանսիայի ծնունդն է: Նրանք հենց բուն սկզբից ուղղություն ենին տալիս Լիդայի գործունեյությանը, ուստի և վոչ մի զարմանալի բան չկա նրանում, վոր Լիդան միշտ ամբողջովին ու լիովին պաշտպան եր կանգնած անդլո-Փրանսական իմակերիսալիդմի շահերին: Զանազան միջազգային կոնֆլիկտները Լիդայի կողմից քննարկվելիս նրա վորոշումներն անշեղորեն յիշում ենին այդ յերկու իմակերիսալիստական պետությունների շահերից: Բերենք միքանի բնորոշ որինակներ:

1920 թվականին պանական Լեհաստանը աղքեսիայի ակտ կատարեց իր հարևան թույլ պետության—Լիտվայի գեմ: Լեհական գեներալ Ժելիտովսկին, Լիտվայի սահմանները ներխուժելով, գրավեց Լիտվայի կարևորագույն և խոշորագույն կենտրոնը—Վիլնո քաղաքը: Ի՞նչ դիրք բռնեց աղքեսիայի այդ ակնհայտ ակտի վերաբերմամբ Ազգերի Լիդան: Վիլնոյի նկատմամբ Լիտվայի ունեցած իրավունքներն ամենաչին կառկածի անդամ յենթակա չեյին: Ազգերի Լիդան մինչ այդ, ընդամենը միայն մի տարի առաջ ժամանակավոր գեմարկացիոն գիծ սահմանեց Լիտվայի ու Լեհաստանի միջև, Վիլնոյի մարզը Լիտվային վերադրելով: Սակայն Ֆրանսիան շահագրդոված եր Լեհաստանի ուժեղացման համար, վորը Փրանսական քաղաքականության կարևորագույն գործիքն եր հանդիսանում Արևելյան Յիդրության վերաբայում. Վիլնոն Լեհաստանին հանձնելը պետք է ամրա-

պնդեր վերջինիս դիրքերը Խորհրդային Հանրապետության վերաբերմամբ, վորի դեմ Լեհաստանն այդ ժամանակ պատերազմ եր մղում, և միաժամանակ թուլացներ Լիտվայի դիրքերը, մեկուսացնելով նրան ՌԽՖՍՀ-ից: Յել Ֆրանսիային հաջողվեց առանց դժվարության իր կամքը վաթաթթել Ազգերի Լիդայի վղին, վորը ճանաչեց «կատարված փաստը»—Վիլնոյի զավթումը Լեհաստանի կողմից:

Մոտավորապես նույնպիսի բնույթ եր կրում Ազգերի Լիդայի վորոշումը բարձր արդյունաբերական շրջան հանդիսացող Վերին Սիլեզիայի հարցի վերաբերմամբ, վորի բնակիչներն առավելապես գերմանացիներ եյին, և վորը մինչև համաշխարհային իմակերիսալիստական պատերազմը պատկանում եր Գերմանիային: Այդ հարցում Անդլիայի ու Ֆրանսիայի միջև միաբանություն չկար: Գերմանիային թուլացնելու և Լեհաստանն ուժեղացնելու նպատակով Ֆրանսիան ձգում եր, վորպեսզի այդ շրջանը հանձնվի Լեհաստանին, բայց Անդլիան չեր ուղղում Գերմանիայի շափառանց թուլացումը, վախենալով, վոր այդ առաջ կրերի Ֆրանսիայի լիակատար հեղեղոնիայի հաստատումը Յելվրոպայում: Յերկար ընդդիմախոսություններից հետո ինչու Ազգերի Լիդայում, նույնպես և նրանից դուրս, Ազգերի Լիդայի Խորհրդը 1922 թ. հոկտեմբերի 12-ին կայացրեց կոմպլոմետային վորոշում Վերին Սիլեզիան Գերմանիայի ու Լեհաստանի միջև բաժանելու մասին, ըստվորում վերջինս ստացավ մի շարք շրջաններ, վորոնց գերակշռող մասկությունը գերմանացիներ եյին:

1924—1925 թվերին Ազգերի Լիդան շատ ժամանակ նվերեց անդլո-թյուրքական կոնֆլիկտին, վորը ծաղեց Մոսուլի հարուստ նավթաբեր շրջանի (Տիկրիս գետի վերին հոսանք) վիճակի հարցի պատճառով: Թյուրքիան պաշտպանում եր իր իրավունքները Մոսուլի՝ վերաբերմամբ, Անդլիան պահանջում եր, վորպեսզի այն հանձնվի Իրաքին առերես առեղծված արաբական պետությանը, վորը դանդում եր անդլիական մանդատի ներքո, փաստորեն լիակատար վասալական կախվածության մեջ՝ Անդլիայից: Վեճը յերկարացած բնույթ եր կրում, վորովհետեւ այդ ժամանակ Ան-

<sup>1</sup> Ստալին, Լենինիզմի հարցերը, եջ 296—297, ուսու. 9-րդ հրատ.:

գլխայի ու Ֆրանսիայի միջև տեղի յեր ունենում խիստ համառ պայքար, և Ֆրանսիան մի ժամանակ պաշտպանում եր Թյուրքիայի պահանջները: Շահեց Անդլիան, վորի ճշնշան ներքո Ազգերի Լիդայի Խորհուրդը 1925 թվականին վարչում հանեց Մոսուլը Իրաքին հանձնելու մասին:

Այդպիսով, բոլոր դեպքերում, յերբ վորեկ թույլ յերկրի շահերը բաղավում եյին Անդլիայի կամ Ֆրանսիայի իմպերիալիստական շահերի հետ, հարցն անպայմանորեն լուծվում եր հոգուտ վերջինների: Այլ բնույթ եր կրում հարավ-ամերիկյան յերկու հանրապետությունների—Բոլիվիայի ու Պարագվայի միջև յեղած կոնֆլիկտը սահմանամերձ Գրան-Չակո մարդի հարցի առթիվ, վորի (մարդի) վերաբերմամբ յերկումն ել պահանջ եյին հայտնում: 1933 թվականին այդ յերկու պետությունների միջև սբատերազմ բռնկեց: Ազգերի Լիդան բազմիցս զրադից այդ հարցով, բայց՝ ապարդյուն: Դա բացարձում եր նրանով, վոր հարավ-ամերիկյան փոքր հանրապետությունների թիկունքում կանդնած եյին յերկու հզոր իմպերիալիստական պետություններ՝ ԱՄՆ-ը, վորոնք ակտիվ կերպով պաշտպանում եյին Բոլիվիային, և Անդլիան, վորը աջակցություն եր ցույց տալիս Պարագվային:

Ազգերի Լիդան հարմար գործիք եր միջազգային կոնֆլիկտները «լուծելու» համար՝ այն դեպքերում, յերբ ուղղում եյին «որինական» հիմնավորում տալ հզոր իմպերիալիստական պետությունների կողմից թույլ և մանր յերկրների վերաբերմամբ կատարվող բռնությանը: Իսկ այնտեղ, վորտեղ յերկու իմպերիալիստական դիշատիչների շահերն եյին բաղկավում, Ազգերի Լիդան անշեղորին ձեռնապահ եր մնում:

Ազգերի Լիդայի պաշտոնական Փունկցիաներից մեկն ել յենթամանդատային տերիտորիաների կառավարման վերահսկողությունն եր և Յեկվոպայում «աղդային փոքրամասնությունը»: Դժվար չե համոզվել, վոր Ազգերի Լիդայի գործունեյությունն այդ յերկու ուղղությամբ նույնպես ամբողջովին անդլո-Փրանսական իմպերիալիզմի շահերին եր համապատասխանում:

Վերցնենք, որինակ, աղդային փոքրամասնությունների հարցը: 1914—1918 թ. թ. պատերազմից հետո մի շարք յեկվոպական պետություններ (Ալբանիա, Բուլղարիա, Հունգարիա, Թյուրքիա, Լեհաստան, Զեխո-Ալպիկակիա, Ռումինիա, Հունաստան, Ֆինլանդիա, Ալբանիա և այլն) իրենց վրա պարտավորություն վերցրին պաշտպանելու այն աղդային փոքրամասնությունների իրավունքները, վորոնք ապրում են իրենց պետական սահմաններում: Այդ պարտավորությունների կատարման վերահսկողությունը զբվեց Ազգերի Լիդայի վրա, վորին կից ստեղծվեց աղդային փոքրամասնությունների գործերի հատուկ Հանձնաժողով՝ աղդային փոքրամասնությունների ներկայացուցիչներից ստացվող գանդատները քննելու համար: Տեսականորին յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի Ազգերի Լիդային գանդատ տալու ամեն մի պետության վրա, վորը խախում ե աղդային փոքրամասնությունների իրավունքները: Իսկ ի՞նչ ե ստացվում գործնականում: Դանդատների մեծ մասը Հանձնաժողովին առհասարակ չի քննում Փորմալ հիմունքներով (բավական ե անել, վոր քննարկման յենթակա չեն այն դանդատները, վորոնք գրված են, Ազգերի Լիդայի քարտուղարության կարծիքով, «խիստ տանով», այն գանդատները, վորոնք բղիսում են «վատ հաստատված աղքյուրից», այն գանդատները, վորոնք վերաբերում են Ազգերի Լիդայում արդեն քննարկման առարկա յեղածներին և այլն): Ազգերի Լիդայի քարտուղարության մեջ նախնական զոման յենթարկվելուց հետո միայն գանդատները դնում են աղդային փոքրամասնությունների գործերի Հանձնաժողովը, վորն ստացվող գանդատն ուղարկում ե համալրատասխան պետության, ըստվորում ինքրում ե տալ իրենց «որիտողությունները»: Այդ «որիտողությունները» (յեթե գրանք առհասարակ ստացվում են) սովորաբար բյուրոկրատական խուսազրության բնույթ են կրում, յեթե վոչ ուղղակի ծալցանքի բնույթ՝ գանդատավորի վերաբերմամբ: Բայց զիտողությունների բնույթից անկախ արդյունքն անպայմանորեն նույն և լինում—Հանձնաժողովը «հիմքեր չի գտնում» հարցն Ազգերի Լիդայի Խորհրդի քննարկմանը հանձնելու

Համար : Բավական և ասել, վոր 1929—1936թ. թ. ժամանակաշրջանում Ազգերի Լիդային տրված 852 հայտարարություններից 381-ը, այսինքն՝ մոտավորապես 45%-ը Լիդայի քարտուղարությունը միանդամից մերժել է փորմալ նկատառումներով, իսկ 471-ից միայն 4ինքն և արժանացել Ազգերի Լիդայի Խորհրդի քննությանը հանձնվելու : Այնուամենայնիվ մնացածներն ել ճիշտ նույնպես մերժվել են :

Վորպես որինակ բներենք ազգային փոքրամասնությունների գործերի Հանձնաժողովի՝ 1933թին ընդունած բնորոշ մի բանաձևը : Գանդատավորը հայտարարության մեջ մատնաշել եր մի շարք փաստեր այն մասին, վոր ուկրաինական ազգային փոքրամասնությունը Խոլմի դավառում (Լեհաստան) ճնշվում ե, մասնավորապես նա մատնաշել եր այն, վոր ամենախիստ կերպով արդելվում և ուկրաինական լեզուն, վոչչացվում են ուկրաինական լեզվով գրված ցուցանակները, փակլում են ուկրաինական կոռուպտիվները և կուլտուրական կազմակերպությունները, արդելվում են ուկրաինական ներկայացումներն ու համերդները, հայածվում ե ուկրաինական հոգևորականությունը և այլն :

Իսկ ազգային փոքրամասնությունների գործերի Հանձնաժողովի բանաձևում ասված եր, վոր նա «իր պարտքն և համարում լեհական կառավարությանը չնորհակալություն հայտնելու նրա սիրալիր կերպով ներկայացրած առանձնապես մանրամասն տեղեկությունների համար» : Հանձնաժողովը վորոշել է «Հարցի հետազոտումը վերջացած համարել, առանց՝ նրա մասին իրազեկ դարձնելու Ազգերի Լիդայի Խորհրդին» : Այդ բանաձևը տիպիկ է ազգային փոքրամասնությունների գործերի Հանձնաժողովի աշխատանքի ամբողջ վօճի համար :


Ազգերի Լիդան փաստորեն հանդիսանում եր արդի կապիտալիստական Յեվրոպայում ազգային փոքրամասնությունների կեղեցման իմպերիալիստական ուժիմի հենարանը : Յեթե հիշենք, վոր հիմնականում ազգային փոքրամասնությունները կենարունացած եյին այն յերկրներում, վորոնք ամենասերտ կերպով կապված եյին Անդլիայի ու ֆրանսիայի հետ (Լեհաստան, Չեխո-Մոլդավիա, Հարավ-

Ալավիա և այլն), առա հեշտ կլինի հասկանալ, վոր Ազգերի Լիդան անդլիական ու ֆրանսական իմպերիալիստների անմիջական առաջադրանքն եր կատարում :

Նույն այդ նոպատակներին եր ծառայում Ազգերի Լիդայի յերկակայական «կոնտրոլ» մանդատային այն տերիտորիաների վերաբերմամբ, վոր հանձնված են Անդլիայի, Ֆրանսակայի և միքանի այլ պետությունների կառավարմանը : Փաստորեն այդ «կոնտրոլ» հանգում եր այն բանին, վոր մանդատավոր պետություններն ամեն տարի Ազգերի Լիդային կից Մանդատային Հանձնաժողովին ներկայացնում եյին առավել կամ պակաս մեծածավալ հաշվետվություն մանդատային տերիտորիաների կառավարման մասին : Էստոնիան եյության՝ մանդատավորներին տրվում եր գործողությունների լիակատար ազատություն :

Յայտուն որինակ եր հանդիսանում Պաղեստինը : Անդլիական իմպերիալիստները համաշխարհային պատերազմից հետո գլուխ բերին այդ յերկիրն իրենց հանձնելու գործը : Պաղեստինը հակայական ստրատեգիական նշանակությունունի, վորովհետեւ հյուսիսից պաշտպանում և Սուեզի ջրանցքի մուտքը, այն ջրանցքի, վորը Միջերկրական ծովը կապութ և կարմիր ծովի և Հնդկական ովկիանոսի հետ : Կամենալով ամբազնել իր դիրքերը Պաղեստինում, ձգտելով այնտեղ ստեղծել այսպես կոչված Հրեական ազգային ոչախ, այսինքն՝ վասարական Հրեական պետություն, վորը Անդլիան կարող կլիներ ողտազորեն բարձրացող արաբական ազգային-ազգատրազբական շարժման զեմ պայքարելու համար, անդլիական իմպերիալիստներն ամեն կերպ խրախուսում եյին Հրեաների գաղթը զեսի Պաղեստինը : Անդլիայիների տեր ու տնօրինությունը Պաղեստինում և նրանց կողմից Հրեական ներզադթին ցույց տրվող հովանավորությունը բազմից առաջ են բերել արաբական բնակչության ապստամբությունները : Երաբների մեծ ապստամբությունը բռնկեց 1936թվին ու կրկնվեց ավելի մեծ ուժով 1938թ. : Այդ ապստամբություններն, ըստ եյության, ակնբախ ապացույց եյին Պաղեստինում կիրառվող անդլիական քաղաքականության սնանկության : Սակայն Ազգերի Լիդան վոչ

1540



ժիայն Անգլիայից չխեց Պաղեստինի կառավարման մանդատը, այլ և փաստորեն անգլիացիներին այնտեղ գործողությունների լիակատար ազատություն տվեց։ Ազգերի Լիգան դեպքերի բնթացքին չխառնեց մինչև իսկ այն ժամանակ, յերբ անգլիական իմալերիալիսաներն իսկական պատերազմ մղեցին արաբ բնակչության դեմ, Հրետանային ու գնդացրային կրակով վոչնչաշնելով արաբական դյուզերը, ոմբակոծելով նրանց՝ ողեց, արաբների դեմ գործի դնելով տանկեր և ժամանակակից ռազմական տեխնիկայի բոլոր մյուս միջոցները։

Պակաս ցուցանշական չե Ալեքսանդրետի սանջակը Սիրիայից անջատելու պատմությունը։ Այդ սանջակը (դավառ) ամենահյուսիսային մասն և Սիրիայի, վորը գտնվում է Ֆրանսիայի մանդատային կոռուվարման ներքո։ Թյուրքիան 1936 թվին իր պահանջները հայտնեց Ալեքսանդրետի սանջակի տերիտորիայի վերաբերմաք, —անհիմն կերպով պընդելով, թե սանջակի բնակչության մեծամասնությունը թյուրքեր են։ Դրա կազմկցությամբ թյուրքիայի ու Ֆրանսիայի միջև կոնֆլիկտ առաջացավ, վորը տեսեց միքանի տարի։ Վերջապես, 1939 թվին Ֆրանսիան, ձգտելով թյուրքիային անգլո-ֆրանսական ռազմական բլոկի մեջ քաշել, նրան «ողիջեց» Ալեքսանդրետի սանջակը։ Դրանից հետո յերկու պետությունների միջև միոխաղարձ ողնության սրայժանագիր կնքվեց, վորին և գումարմ եր Ֆրանսիան։

Ֆրանսիան, իհարկե, վոչ մի իրավունք չուներ ուրիշ պետության զիջելու այն յերկրի մի մասը, վորը նրան եր հանձնված ժամանակավոր կոռուվարման համար։ Գաղութային տերիտորիաների կոռուվարման համար «մանդատներ» տեսականորեն տրվում են միայն ժամանակավոր կերպով։ Սիրիայի անդամահատումը և տերիտորիայի մի մասի անջատումը նրանից՝ առանց հանրաքվե կատարելու կամ այս կամ այն ձևով բնակչության կամքը հաշվի առնելու, — Սիրիայի աղջային շահերի աղջակող խախտումը հանդիպացալ, վորոնց պահապան պետք ե կանգներ Ֆրանսիան իրերեւ մանդատավոր-պետություն։ Չնայած յենթամանդատային տերիտորիայի բնակչության տարրական շահերի ակնհայտ

խախտմանը, Ազգերի Լիգան առանց վորեւ առարկության վավերացք սիրիական ժողովրդի հաշվին կնքված իմակերակական գործարքը։

Զի կարելի, վերջապես, չհիշատակել նաև Ազգերի Լիգայի՝ «սպառազինումների սահմանափակման» բնադրավառում կատարված «գործունեյությունը»։ Ազգերի Լիգայի կանոնադրությունը նախատեսում է (տե՛ս Հոդված 8) սպառազինումների կրծատում և սահմանափակում նրա բոլոր անդամների կողմից։ Ազգերի Լիգան միշտ շատ ուշադրություն եր նվիրում զինաթափման հարցին։ 1925 թվին ստեղծվեց «զինաթափման կոնֆերենցիայի նախապատրաստական հանձնաժողով», վորին մասնակցեցին Ազգերի Լիգայի մեջ չմտած մի չարք պետություններ, այդ թվում նաև ԽՍՀՄ-ն։ 1932 թվին բացվեց «զինաթափման միջադրամային կոնֆերենցիան»։ ԽՍՀՄ-ն ինչպես հանձնաժողովում, նույնպես և կոնֆերենցիայում համառ պայքար եր մզում զինաթափման համար։ Խորհրդային դեեզդացիան մշակեց ու նախապատրաստական հանձնաժողովին ներկայացրեց ընդհանուր և լիակատար զինաթափման նախադիմ։ Այդ նախադիմը մերժվեց։ Այն ժամանակ խորհրդային դեեզդացիան ներկայացրեց սպառազինումների մասնակի պրոդեսիվ և պրոպրոցիսնալ կրծատման նախադիմ։ Սակայն այդ նախադիմն ել նույն բախտը վիճակիվեց։

Զինաթափման և սպառազինումների սահմանափակման բնադրավառում Ազգերի Լիգայի կատարած բաղմամյա աշխատանքը վոչ մի դրական արդյունք չտվեց։ Յել այլ կերպ չեր ել կարող լինել, վորովհետեւ դեկրավար իմպերիալիստական պետությունները յերեք լրջորեն չեյին մտածում զինաթափման մասին։ Բնդհակառակը, նրանք ձգտում եյին վոչ միայն պահպանել, այլ և մաքսիմալ չափով ավելացնել իրենց սպառազինումները։ Հենվելով իրենց սպառական հզրության վրա, զեկալվար պետությունները ձգտում եյին սպահովել իրենց հեղեմոնիան Յեվրոպայում, զինված ուժով ճնշել ստրկացված գաղութային ժողովուրդների՝ իմպերիալիստական կեղեքումից աղատվելու փորձերը, պրօյետարիատի հեղափոխական յելույթները մետրոպոլում։ Զի-

նաթափման վերաբերյալ շաղակրատանքը նրանց հարկավոր եր սպառազինուուների և նոր խմբերի լիստական պատերազմի նախապատրաստման նրանց կողմից կիրառվող քաղաքականությունը քողարկելու համար։ ԽՍՀՄ-ն, մասնակցելով «նախապատրաստական հանձնաժողովի» աշխատանքին և «զինթափման կոնֆերենցիալին», մերկացրեց իմպերիալիստական բոլոր այդ պլանները։ ԽՍՀՄ-ի ներկայացուցիչները պատեցին իմպերիալիստական դիշատիչների դիմակը, վորոնք, խաղաղության և զինթափման վերաբերյալ կեղծավոր խոսակցություններով քողարկված, ծածուկ արագ կերպով զինվում ելին, պատրաստվելով նոր գալթողական պատերազմների։

Աղջերի Լիդան ստեղծվեց 20 տարի սրանից առաջ։ Այդ ժամանակամիջոցում Աղջերի Լիդայի դերը միշտ միատեսակ չի յեղել։ Միջաղջային կացության փոփոխություններին համապատասխան առաջին պլանի վրա ելին քաշվում նրա դորժունեյության տարբեր կողմերը։ Պատերազմը վերջանալուց հետո առաջին տարիներում, հեղափոխության առաջին չըջանում, Աղջերի Լիդան խիստ կարեռ դեր և խաղում ուժքորմիստական սոցիալ-դեմոկրատիայի պացիֆիստական պրոպագանդայի գործում։ Պացիֆիստական պատրանքներ սերմանելով մասսաների մեջ, ներկայացնելով Աղջերի Լիդան վորպես իմպերիալիստական պատերազմների վերացման միջոց, ուժքորմիստական սոցիալ-դեմոկրատիան փորձում և այդ ձևով բանվոր դասակարգին հետ կանգնեցնել կապիտալիզմի դեմ մզվող հեղափոխական պայքարից։

1924 թվին Յեվրոպան թեակոխում և կապիտալիզմի մասնակի կայունացման ժամանակաշրջանը։ Բուրժուազիային հաջողվում և ժամանակավորապես ճնշել հեղափոխական շարժումը և վերացնել այն անմիջական վտանգը, վորոպանում եր կապիտալիստական կարգերին։ Յեվրոպայի իմպերիալիստական չըջանում, ու ամենից առաջ անդիական պնդաճակատները, փորձում են հեղափոխական ալիքեր ժամանակավոր իջնելն ողագործել Խորհրդային Միության դեմ հարձակման անցնելու համար։ Անդիական կոնսերվատիվ կառավարությունը 1924 թվին չեղալ և հայ-

տարարում անդլո-խորհրդային պայմանագիրը և 1927 թվին խորում և դիվանագիտական հարաբերությունները ԽՍՀՄ-ի հետ։ Նոր պատերազմ պատրաստելով ԽՍՀՄ-ի դեմ, անդիական ունակցիոն բուրժուազիան ձգտում և Յեվրոպայի զինավոր կապիտալիստական պետությունների հակախորհրդային միասնական ճակատ կազմակերպել։ Բայց այդպիսի միասնական ճակատն անհնարին և առանց Գերմանիայի մասնակցության։ Յեղահանդիս բարեկարգության մեջ ներդրավակելուն, վոր կազմվում և անզիւսական և Փրանսական իմպերիալիստաների զեկավարությամբ։ Աղջերի Լիդան դառնում և այդ մանյովը իրականացման գործիքներից մեկը։ 1925 թվին Անդլիան և Ֆրանսիան (իտալիայի ու Յելիայի մասնակցությամբ) Գերմանիայի հետ կնքում են Լոկանոյի պակտը։ Զեկանության այդ պակտը պետք է հարձակումից սպահովի մրանսիայի ու Գերմանիայի միջև ընկած սահմանները։ Իսկ փասորը նա նշանակում եր մի փորձ, վորի նոպատակին եր Գերմանիան ներդրավել անդլո-Փրանսական աղջեցության որբատի մեջ ու Յեվրոպայում ստեղծել հակասորհրդային բլոկ Գերմանիայի մասնակցությամբ և Անդլիայի զեկավարությամբ։ Գերմանիան, հույս ունենալով այդ միջոցով թեթևացնելու վերսալի պայմանագրի պայմանները, սոորազբում և Լոկանոյի պակտը և 1926 թվին ժամանում և Աղջերի Լիդայի մեջ։ Սկսվում է Աղջերի Լիդայի «Լոկանոյի ժամանակաշրջանը» (1926—1933 թ. թ.)։

Բայց անդլիական ու Փրանսական իմպերիալիստների պլանները խորտակեցին։ Զհաջողվեց Գերմանիային ողոտագործել վորպես անդլո-Փրանսական աղբեկացի գործիք ԽՍՀՄ-ի դեմ։

Արդեն 1926 թվին Գերմանիան Բեռլինում ԽՍՀՄ-ի հետ նոր պայմանագիր և կնքում, վորը նորմալ փոխհարաբերություններ և հաստատում յերկու յերկրների միջև։ Անհաջողության մատնալեց Լոկանոյի այն փորձը, վորի նոպատակըն եր հաղթող-պետությունների միջև գոյություն ունեցող հակասորհրդային հաղթահարել կամ թուլացնել ինժեկտ ԽՍՀՄ-ի։

Հաջորդ տարիներում հակասությունները կապիտալիստական աշխարհի ներսում ե'լ ավելի սրվեցին 1929—1932 թվերի համաշխարհային տնտեսական կրիզիսի կապակցությամբ, վորը խիստ ուժեղացրեց իմպերիալիստների պայքարը շուկաների համար: 1931 թվին Յաղոնիան, Մանջուրիա և ներքութելով, Հեռավոր Արևելքում սկսում է պայքար աշխարհի վերաբաժանման համար: Խոշորագույն կոնֆլիկտներ են հասունանում նմանապես Յեվրոպայում: սկսում է վերսայան սիստեմի փլուզումը:

Իմպերիալիստական պետությունների միջև հակասությունների խիստ սրումն առաջ է բերում Աղդերի Լիդայի կազմի փոփոխությունը. 1933 թվին Աղդերի Լիդայից դուրս յեկան Յաղոնիան ու Գերմանիան: Իտալիան 1935 թվից դադարում է Աղդերի Լիդայի աշխատանքներին փառական մասնակցություն ցույց տալ և 1937 թվին պաշտոնապես հայտարարում է Աղդերի Լիդայից դուրս դալու մասին:

Սոտավորապես 1933 թվի վերջերին դրսենորված պառակտումն իմպերիալիստների բանակում՝ չափաժանց ուժեղացրեց նոր իմպերիալիստական պատերազմ՝ ծագելու սղառնալիքը: Դրա կազմակցությամբ հսկայական նշանակություն ստացավ Հետեղողական պայքարը հանուն խաղաղության, պայքար, վոր շարունակ անց եր կացնում հզոր ինքուսորփալ պետություն դարձած Խորհրդային Միությունը: Աղդերի Լիդայի կազմակերպման հենց սկզբից Խորհրդային Միությունը բացասական դիրք բռնեց նրա վերաբերմամբ, իրավացիորեն այն համարելով հաղթաղղությունների իմպերիալիստական քաղաքականության գործիք: Դեռևս 1922 թ. հոկտեմբերին Լենինը «Որսերվեր»-ի և «Մանշեստեր Գարդիան»-ի թղթակից՝ Ֆարբմանի հետ ունեցած ինտերվույժ ժամանակ ասել ե.

«Մենք, իհարկե, Աղդերի Լիդայի հակառակորդ ենք, և յես կարծում եմ, վոր վո՛չ միայն մեր տնտեսական և քաղաքական կառուցվածքն իր առանձևահատկություններով առաջացնում է մեր բացասական վերաբերմունքը դեպի Աղդերի Լիդան, այլև ընդհանրապես արդի միջազգային ամ-

րողջ քաղաքականության կոնկրետ պայմանների տեսակետից յելնելով՝ խաղաղության շահերն ել միանդամայն արքարացնում են այդ բացասական վերաբերմունքը: Աղդերի Լիդան այնքան է կրում իր վրա համաշխարհային պատերազմի ծնունդը լինելու բոլոր գծերը, այնքան և անխղիլուրեն կապված վերսալի գաշնագրի հետ, այնքան և ամբողջապես թափանցված իրավես իրավահավասարություն սահմանելուն նման, աղդերի միջն խաղաղ համակեցության իրական շահունք ստեղծելուն նման մի բանի բացակայությամբ, վոր թվում է ինձ, մեր բացասական վերաբերմունքը դեպի Աղդերի Լիդան հասկանալի յի և հետագա մեկնաբանություններ չեն պահանջում»<sup>1</sup>:

Սակայն 1933—1934 թ. թ. միջազգային իրազբության մեջ կատարիված տեղաշարժերը փոխում են խորհրդային կառավարության վերաբերմունքը դեպի Աղդերի Լիդան: Մինչև այդ ժամանակը Աղդերի Լիդան հանդիսանում էր վորպես իմպերիալիստական քաղաքականության գործիք Անդիլայի ու Ֆրանսիայի ձեռքին, վորպես նոր զավթողական պատերազմների նախապատրաստման գործիք: Այդ ժամանակներում առաջացան միքանի նոր գործոններ, վորոնք կարող եյին բարելազատեհ հանդամանքներում նպաստել Աղդերի Լիդային՝ դառնալու խաղաղության վորոշ, թեպետև թույլ, գործիք, վորը պետք է արգելակեր պատերազմի ծավալումը:

Վորո՞նք եյին այդ գործոնները: Այդ նախ և առաջ Աղդերի Լիդայի մասնկացումն է՝ վորպես անդլո-Փրանսական բլոկի հականորհութային քաղաքականության գործիք: Անհաջողության մասնիցին Անդիլայի ու Ֆրանսիայի այն վորձերը, վորոնց նպաստել իմպերիալիստական պետություններին Աղդերի Լիդայի շուրջը համախմբել ԽՍՀ Միության գեմ կոխվ մղելու պլատֆորմի վրա: Կազիտավական աշխարհի ներսում յեղած անհաղթահարելի հակառակությունները անշեղորեն վիժեցնում եյին միասնական հականորհութային ճակատի ստեղծումը:

Հսկայական նշանակություն ուներ նաև ուժերի հարա-

1 Լենին, հ. XXVII, էջ 421—422, Հայոկառեռա, 1933 թ.:

բերակցության փոփոխությունը միջազգային ասպարհություն : Վիթխարի չափերով՝ աճել եր ԽՍՀՄ-ի տնտեսական և ռազմական զորությունը, աճել եր նրա տեսակաբար կշիռը համաշխարհային քաղաքականության մեջ : Միևնույն ժամանակ թուլացել եյին Անդլիայի ու Ֆրանսիայի միջազգային դիրքերը : Այդ իր հերթին մզում եր անդլիական ու Փրանսական բուրժուազիայի դեկավար շրջաններին դեպի այն ուղին, վորոշ վորոշ չափով պետք են նորմալացներ հարաբերությունները միջազգային քաղաքականության այնպիսի մեղքունի հետ, ինչպիսին Խորհրդային Միությունն է :

Քիչ դեր չխաղացին նաև տեղաշարժերն արևմտայեվրոպական յերկրների ներքին-քաղաքական դրության մեջ : 1929—1932 թ. թ. համաշխարհային տնտեսական կրիզիսի ազդեցության տակ կապիտալիստական յերկրներում աճում են հեղափոխական տրամադրությունները : Այն կուսակցությունների լիներները, վորոնք կարված են պրոլետարական ու մանր-բուրժուական մասսաների հետ (սոցիալիստական և սովետիկալ-սոցիալիստական կուսակցությունը ֆրանսիայում), մասսաների ճնշման ներքո ժամանակավորապես փոխում են լրենց դիմում, շուրջ են տալիս դեպի ձախ : Այդ հողի վրա միքանի յերկրներում, ինչպես որինակ, ֆրանսիայում, համարավոր եղանում—տուաջ և դալիս, թեկուղ կարճ ժամանակով, կոմունիստների համագործակցություն այդ կուսակցությունների հետ՝ ժողովրդական ճակատի շրջանակներում, ճակատ, վորոշ մի ժամանակ խոչընդունում է անդիսանում ժամանակային քաղաքական ուժ եր հանդիսանում ֆրանսիայում : Նույնամասն տեղենցներ, թեպետև անհամեմատ ավելի թույլ տարիանի, յերեան յեկան նաև Անդլիայում :

Ներքին-քաղաքական տեղաշարժերը ֆրանսիայում ու Անդլիայում քիչ ազդեցություն չուրծեցին այդ յերկրների նաև արտաքին քաղաքականության վրա : Առաջին հականորհային կուրսի կիրառումն անհնարին զարձակ, մասսաներն ստիպողաբար պահանջում եյին համագործակցություն հաստատել ԽՍՀՄ-ի հետ :

Այդ բոլոր հանգամքների ազդեցության տակ ֆրանսիան ավագ ետապում երականապես փոխում է իր քաղա-

քականությունը ԽՍՀՄ-ի վերաբերմամբ և նրա հետ կընքում ե չհարձակվելու պայմանագիր, իսկ 1935 թվականին՝ խաղարծ ողնության պայմանագիր : Վորոշ, թեպետև անհամեմատ ավելի թույլ, փոփոխություններ նշվեցին նույնականության մեջ :

Յեվրոպայի քաղաքական իրադրության մեջ տեղի ունեցած փոփոխությունները հիմք եյին տալիս յենթադրելու, վոր նոր պայմաններում Ազգերի Լիգան կարող ե վորոշ չափով ողակադրմել վորպես խաղաղության գործիք : Այդ հաշվի առնելով, ԽՍՀՄ-ն փոխեց իր դիրքը Լիգայի վերաբերմամբ : 1934 թվական, յերբ 34 պետություններ ԽՍՀՄ-ին հարավիրեցին մտնել Լիգայի մեջ, նա իր համաձայնությունը տվեց : Մտնելով Ազգերի Լիգայի մեջ, Խորհրդային Սիությունը մտադրություն ուներ նրա ներսում պայքար ծավալելու խաղաղության համար և ձգտում եր նրան դարձնել մի տեսակ խոչընդունությունը յերկրորդ խմբերիալիստական պատերազմը ծավալելու ճանապարհին :

Ամերիկյան ժուռնալիստ Դյուրանտի հետ 1933 թ. դեկտեմբերին ունեցած զրույցի ժամանակ Դյուրանտի աշխացին թե՝ «Արդյոք միշտ բացառապես բացասակա՞ն և Զեր դիրքը Ազգերի Լիգայի նկատմամբ», — ընկեր Ստալինը պատասխանել է .

«Վո՞չ, վոչ միշտ և վոչ բոլոր պայմաններում . . . լիդան կարող ե վորոշ արդեքալ դառնալ ուսումնական գործողությունների առաջացումը կամ դրանց խանդարելու համար : Յեթե այդ այդպես ե, յեթե Լիգան կարող կլինի մի տեսակ թումբ հանդիսանալ այն բանի ճանապարհին, վորպեսպի թեկուղ փոքր ինչ դժվարացնի պատերազմի գործը և վորոշ չափով հեշտացնի խաղաղության գործը, — ապա այն ժամանակ մենք դեմ չենք Լիգային : Այսո՛, յեթե այդպես լինի պատմական դեպքերի ընթացքը, ապա ուրեմն բացառապես չեն, վոր մենք կպաշտպանենք Ազգերի Լիգային, չնայած նրա հսկայական թերություններին»<sup>1</sup> :

<sup>1</sup> «Правда», 4 հունվարի 1934 թ.:

Հինգ ապրի Ազգերի Լիդայի մեջ մնալու ընթացքում ԽՍՀՄ-ն հսկայական աշխատանք կատարեց, պրապարանդա անելով Խորհրդային կառավարության խաղաղասիրական քաղաքականությունը: ԽՍՀՄ-ի ներկայացուցիչները ժընելի ամբողնից անմինա կերպով մերկացնում ու նշավակում եյին կեղծավորությունն ու յերկերեսանիությունը պատերազմի խմբերիալիստական հրձիդների, վորոնք իրենց խսկական գեմքը թագուում են պացիֆիստական ֆրազերի հետևում: Խորհրդային Միության ազնիվ ու անվեհեր դիրքը չափազանց զժվարացնում եր նրանց աշխատանքը, ովքեր Ազգերի Լիդայի կուլիսների հետեւում կամաց-կամաց պատերազմ եյին պատրաստում: Կասկած չկա, վոր ԽՍՀՄ-ի խաղաղասիրական քաղաքականությունը և այն պայքարը, վոր նս մղում եր ժընելում, կառեցնում եյին նոր իմպերիալիստական պատերազմի ծրագումը:

Սակայն Խորհրդային Միության բոլոր այն փորձերը, վորոնց նպատակն եր Ազգերի Լիդան դարձնել խաղաղության պահպանման խսկական դործիք, Ազգերի Լիդայում դեմ եյին առնում Անդլիայի ու Ֆրանսիայի սարստաժին և բացահայտ հակաղղեցությանը: Այդ յերկրների քաղաքականության մեջ հաղթում եյին ռեակցիոն բուրժուազիայի առավել աղբեսիք շրջանները, վորոնք հույսը դրել եյին այն բանի վրա, վոր ԽՍՀՄ-ին քաշն պատերազմի մեջ՝ ընդդեմ Գերմանիայի և այլ յերկրների:

Անդիքան ու Ֆրանսիան Ազգերի Լիդայի քողի տակ սկըսում են ուժգնատես նպաստել յերկրորդ խմբերիալիստական պատերազմի առաջանալուն: Այդ տեսդենցը լիքակատար պարզորոշությամբ յերեան յեկալ արդեն խտալուհաբեշական պատերազմի ժամանակ (1935 թ. աշնանը), յերբ չտափանց սրբեցին հարաբերություններն Անդլիայի ու Խտալիայի միջն: Խտալիայի կողմից զարեշտանի գրավումն ուժեղ կերպով շոշափում եր Անդլիայի կապիտալիստական շահերը, բայց վերջինս, այնուամենայնիվ, սիրտ չարեց Ազգերի Լիդայի բոլոր միջոցները դործի զնել Խտալիայի վրա ճնշում դործադրելու համար, յերկյուղ կրելով, վոր Խտալիայի պարտությունը կարող եր այսեղ խոշոր հեղափորական ցնցումներ առաջ բերել: Հետեւանքն այն յեղակ,

վոր Ազգերի Լիդան, Անդլիայի ու Ֆրանսիայի ճնշման տակ սահմանափակվեց Լիդատ-պուտ, միջոցառումներով (աղնատեսական սանկցիաներ), վորոնք չխանգարեցին և չեյին կարող խանդարել զարեշտանի զավթմանն Խտալիայի կողմից:

Ազելի ևս զդովելի ու դավաճանական դիրք բռնեցին Անդլիայի և Ֆրանսիայի զեկավար ըրջանները հանրապետական խոպանիայի վերաբերմաք, վորը 1936 թ. ամառն ինտերվենցիայի յենթարկվեց: Ազգերի Լիդան Անդլիայի ու Ֆրանսիայի ճնշման ներքո ձեռք քաշեց այդ հարցում ամեն մի մասնակցությունից, չնայած հսկանական կառավարության կողմից նրան բազմիցս ուղղված դիմումներին, վորը պահանջում եր սանկցիաներ զործադրել ինտերվենտների վերաբերմաք: Ազգերի Լիդան այդ զործում իր պասսիվությունն առդարացնում եր մատնացուց անելով, վոր զոյտություն ունի «չմիջամտելու կոմիտե», վորը իրրե թե պետք է լուծում տա խոպանիայում կատարվող ինտերվենցիային վերաբերող բոլոր հարցերին: Իսկ ի՞նչ եր ներկայացնում իրենից այդ կոմիտեն: Ինչպես հայտնի յե, նրան Անդլիան ու Ֆրանսիան ստեղծեցին, հատուկ նորատակ ունենալով ողնելու՝ հանրապետական խոպանիային խեղելուն: Նա քողարկում եր ուսարերկրյա իմպերիալիստական պետությունների կողմից խոպանիայում կատարվող ինտերվենցիան:

Ազգերի Լիդան, վորի կանոնադրության 10-րդ հոդվածը խոսում է Լիդայի անդամներին արտաքին աղբեկալիայից պաշտպանելու, նրանց անդրիտորիալ անձնումիւնիւությունը և քաղաքական անկախությունը պաշտպանելու մասին, համարյա յերեք տարի հանդիսավոր դիմում եր ուսարերկրյա ուսադատական ինտերվենցիան խոպանիայում:

Կասկած չկա, վոր հանրապետական խոպանիայի դեմ ուղղված ինտերվենցիան դպալիորեն չոշափում եր Անդլիայի ու Ֆրանսիայի չափանիայի շահերը, բայց, չնայած դրան, նրանք նպաստում եյին խոպանիայի հանրապետությունը խեղելուն՝ ինչպես «չմիջամտելու կոմիտեյի» միջոցով, նույնպես և անմիջականորեն: Այդ գարցյալ բացարիվում ե նրանով, վոր անդլիական և ֆրանսիական բուրժուազիայի զեկավար շրջանները ձգտում եյին զործադրք կնքելու Գերմանիայի և Խտալիայի հետ:

«Զմիջամտելու» նույն քաղաքականությունն Անդիան և Ֆրանսիան կիրառում են կենտրոնական Յելբոպայում:

1938 թվին և 1939 թվի սկզբին Յելբոպայի տերիտորիալ վերաբաժնման պրոցեսն ընթանում էր լիակատար թափով: Մի շարք պետություններ (Ալմարիա, Չեխո-Սլովակիա, Ալբանիա) չքացան Յելբոպայի քաղաքական քարտակից: Հաղարավոր կիրարությամբ սահմանությունը նորերով: Սակայն Աղդերի Լիդան իրեն հեռու յեր պահում այդ գեղքերից:

«Զմիջամտելու» քաղաքականության գաղաթնակետը հանդիսացավ չորս պետությունների՝ Մյունիսինի համաձայնությունը (1938 թ. սեպտեմբերի 30-ին), վորն սկզբ դրեց Չեխո-Սլովակիայի վերացման: Անդիան ու Ֆրանդրեց Չերմանիայի հանդեպ, նրան հանձնելով իրենց բոլոր դիրքերը կենտրոնական Յելբոպայում: Նրանք հույս ունեցին, վոր այդ գնով նրանց հաջողվի իրենց կողմը հրապուրել Չերմանիային, նրան մզել դեպի աղբեսիայի ուղին՝ ընդդեմ ԽՍՀՄ-ի:

Նույնաման քաղաքականություն ելին կիրառում Անդիան ու Ֆրանսիան նաև Հեռավոր Արևելքում Յալպնիայի վերաբերմամբ: Զնայած վոր Յալպնիայի Չինաստան ներխուժումը Անդիայի համար նշանակում եր՝ կորցնել այնտեղ իր խոշորագույն տնտեսական և քաղաքական դիրքերը, նա չփորձեց Յալպնիայի վերաբերմամբ կիրառել մինչև իսկ այն կիսատ-պրատ ձեռնարկումները, վոր Աղդերի Լիդան այն կիսատ-պրատ ձեռնարկումները, վոր Աղդերի Լիդան կիրառեց 1935—1936 թվերին Իտալիայի գեմ, վորովհետեւ Յալպնիային համարում եր վորակես հավանական ողնականը Խորհրդային Միության և չինական ժողովրդի դեմ մղելիք կովում:

Անդիան սկսեց «Հմիջամտելու» քաղաքականություն վարել Հեռավոր Արևելքում սկսած 1931 թվից, յերբ Յալպնիան ներխուժեց Մանջուրիա: Դեռևս 1931 թվի սեպտեմբերին չինական կառավարությունը գիմեց Աղդերի Լիդամբերին չինական համարական կանոնադրության 11-րդ դային ու խորեց, համաձայն կանոնադրության 11-րդ դային միջոցներ ձեռք առնել Մանջուրիայում կատարված յապոնական աղբեսիայի դեմ: Սակայն Անդիայի քաղական սկսած 1931 թվի սկզբ վերաբերմամբ, վորն ամենից ավելի երական նշանակություն կունենար (սակայն այդ կըրճատ սանկցիաներն ել կիրառվեցին ամենին վոչ լիիվ ծավալով, վորովհետեւ մի շարք յերկրներ Աղդերի Լիդայի վարչությունը ուղղակի Բողոտիությամբ բացահայտորեն արտաքին յարկությունը կատարելու համար ամենալավ է աղդամանությունը:

Պաքականությունը կանխորոշում եր Աղդերի Լիդայի պատմակի դիմն այդ հարցում: Լիդայի դերը վերածվեց այն բանին, վոր Չինաստան ուղարկվեց Լիտտոնի հանձնաժողովը՝ պերությունն ուսումնասիրելու: Համար, և Լիտտոնի գեղություրի առթիվ 1933 թվին վորոշում ընդունվեց, վորը հաստատեց Մանջուրիայի վերաբերմամբ Չինաստանի ունեցած սուվերենիությունը: Հեշտ և հասկանալ, վոր այդ պլատոնական բանաձեռն մեծ ողնություն չհասցրեց Չինաստանին: Չին-յապոնական պատերազմն սկսվելուց (1937 թ. ամառը), Բեյյափինը և Տյանցզինը Յապոնիայի կողմից գրավվելուց հետո, չինական կառավարությունը նոր դիմում ուղղեց Աղդերի Լիդային: Այդ գեղքում ևս Չինաստանին ցույց տըրվող «ողնությունը» սահմանափակվեց պլատոնական ցանկությամբ՝ հաջողության համար, և կասկածելի արժեքունեցող «բարոյական աջակցությամբ»:

Իսկ վորո՞նք են յելբուպական և համաշխարհային քաղաքականության այդ վորորորկալի տարիներում (1931 թ.—1939 թ. ամառը) Աղդերի Լիդայի ունեցած գործունեցության արդյունքները: Այդ տարիների ընթացքում չորս պետություններն ել դադարել են դոյցություն ունենալուց, գեմոկրատական իսպանական հանրապետությունը խեղաժամահ արվեց, մեկ պետություն (Չինաստան) արտաքին ադրբեյխայի հետեւնքով կորցրեց իր տերիտորիայի զրայի մաս, այդ թվում յերկրի բոլոր ծովային նավահանգիստները և կենասկան կենտրոնների ճնշող մեծամասնությունը:

Իսկ դրան ի՞նչպես արձագանքեց Աղդերի Լիդան, վորո՞նք պետականություն են Անդիան ու Ֆրանսիան: Միայն մի գեղքում հատակությունը համական պատերազմի ժամանակ—նա աղդեսիայի դեմ տնտեսական սանկցիաներ կիրառեց, և այն ել խիստ կրծառած ձեռվ, այն ե՝ առանց հմբարդու սահմանական կանությունը վերաբերմամբ, վորն ամենից ավելի երական նշանակություն կունենար (սակայն այդ կըրճատ սանկցիաներն ել կիրառվեցին ամենին վոչ լիիվ ծավալով, վորովհետեւ մի շարք յերկրներ Աղդերի Լիդայի վարչությունը ուղղակի Բողոտիությամբ բացահայտորեն արտաքին յարկությունը:

սին): Մի այլ դեպքում (Յապոնիայի վերաբերմամբ) Արդզերի Լիդան առհմանափակվեց մեղմ հայտարարություններով, բայց վոչ մի իրական ողնություն ցույց շավեց Զենաստանին: Իսկ մնացած բոլոր դեպքերում Ազգերի Լիդան նույնիսկ քննության ել չըրեց աղբեսիայի հարցը: Բնդհուկառակը, միքանի դեպքերում Ազգերի Լիդան, հետին թվով, վալերացրեց աղբեսիան: Այդպես յեղավ, որինակ, Հարեւատանի վերաբերմամբ: Յերբ Անդլիան ցանկացավ կանոնավորել իր հարաբերություններն Խտալիայի հետ, Ազգերի Լիդան անմիջապես թույլատրեց (1938 թ. մայիսին) իր բոլոր անդամներին՝ ըստ իրենց հայեցողության վճռել՝ Խտալիայի կողմից Հարեւատանի վերաբերմամբ կատարված անեքսիան ընդունելու կամ չընդունելու հարցը: Դրանով ել չենց Ազգերի Լիդան անուղղակի կերպով վալերացրեց Հարեւատանի զավթումն Խտալիայի կողմից:

Ենորոշ ե Ալբանիայի որինակը: Այն բանից հետո, յերբ խտալիացիներն Ալբանիա ներխուժեցին, ալբանական թագավոր Զողուն զիմեց Ազգերի Լիդային և ինդրեց իրեն ողնություն ցույց տալ Խտալիայի զիմ: Սակայն Ազգերի Լիդան այդ հարցը համարեց այն աստիճան վոչ շտապ, վոր վոչ միայն Խորհրդի կամ ասամբլեայի արտակարգ սեսիա չհրավիրեց, այլև նույնիսկ 1939 թ. դեկտեմբերի առաջիկա սեսիայի քննությանն ել չըրեց այն, հետաձգելով Ազգերի Լիդայի Խորհրդի հաջորդ նիստին: Հետաձգելու անհրաժեշտությունը պատճառաբանվում եր նրանով, վոր Ազգերի Լիդան իր թե զբաղված ե ավելի անհետաձգելի ու շտապ դորձերով:

Այդ հարցում Ազգերի Լիդայի վարքագիծը լիովին արտացոլում ե անդլիական ու Փրանսական կառավարությունների քաղաքականության աղբեսիլ եյությունը: Հենց Անդլիան ու Փրանսիան, վորոնք իրենց իմակերիալիստական գարշապարի տակ են պահում հարյուրավոր միլիոն գաղտնային ստրուկների, պատերազմ սկսեցին Գերմանիայի զիմ ե համառ կերպով մղում են այդ թալանչիական պատերազմը, մերժելով խաղաղության վերաբերյալ ամեն մի առաջարկ:

Ազգերի Լիդայի խրոնիկական անդործունելությունը, նրա անդորությունը, նրա թողարկությունն ու ներդամատվությունն աղբեսիայի հանդեպ՝ ամենաուժեղ հիսարքակություն առաջնօք դեռ հայատում ելին Լիդայի խաղաղարար գերին, —և Ազգերի Լիդայից դուրս յեկան նրա մի շարք անդամները: Լիդայի գոյության ամբողջ ժամանակամիջոցում, զանազան պատճառներով նրա կողմից դուրս են յեկել 19 յերկուներ: Հետաքրքրական ե, թե այդ թիվն ինչպես և բաշխվում ըստ տարիների: Առաջին 13 տարիների ընթացքում Ազգերի Լիդայից պետության դուրս դալու միայն յերկու դեպք ե յեղել: 1933—1935 թ. թ. յեռամյակի ընթացքում այդպիսի գեազք յեղել ե յերեքը, Հաջորդ յեռամյակի՝ 1936—1938 թվերին այդպիսի դեպք յեղել ե ինը, իսկ միմիայն 1939 թ. ընթացքում Ազգերի Լիդայից դուրս են յեկել հինգ պետություններ: ԽՍՀՄ-ն «Հեռացնելուց» հետո նրա մեջ մնում է ընդամենը 43 անդամ—ուկիորդային ցածր թիվ: Յոթ մեծ պետություններից (ԱՄՆ, Անդլիա, Ֆրանսիա, Իտալիա, Գերմանիա, Յապոնիա, ԽՍՀՄ) Ազգերի Լիդայի կազմի մեջ մտնում են այժմ միայն յերկուսը (Անդլիան ու Ֆրանսիան): Դրա փոխարեն Ազգերի Լիդայի անդամների թվի մեջ մըսնում են վոչ փոքրաթիվ «մենած հոգիներ», ինչպես, որինակ, Լիճառտանը, կամ տաններմաններհայմական Ֆինլանդիան:

Անդլո-Փրանսական պարագլուխների քաղաքականությունը, ինտրիգների, մի պետությունը մյուսի ղեմ դրդությունը, իմակերիալիստական բոլիներ կազմակերպիլու քաղաքականությունը, ավելի ու ավելի յեր ուժասպառ անում լիդային: Ազգերի Լիդայից հեռանում ելին մեկ պետություն մյուսի հետեւից:

Սակայն Ազգերի Լիդայի անդամների թվի կրծառվելը՝ նրան պատճառ աղբեսիական վատթարակությունը չե զենետ: Ազգերի Լիդան կորցրեց իր հեղինակությունն ամբողջ աշխարհի աչքում: Յայտուն կերպով յերկան յեկալ նրա մետնությունը, նրա անհետքությունը: «Զմիջամտելու» քաղաքականությունը, վորը ԽՍՀՄ-ի դեմ իմակերիալիստական

բլոկ կաղմաներաբելու հակառակ կողմն և Հանդիսանում դարձեց Աղքերի Լիդան դիակ, վորը կենդանի վիճակում քայլայից բոլորի աչքի առաջ:

Լիդայի լիակատար սնանկությունն առանձնապես ակե-  
այս գարձաւլ յեվրոպական պատերազմը ծաղելուց հետո :  
Անդիմական ու Փրանսական իմպերիալիստները ուժնապե-  
ճառում ելին Գերմանիայի հետ համաձայնության դալ  
ԽՍՀՄ-ի հաշվին : Ըստ նրանց հաշիվների Գերմանիան և  
ԽՍՀՄ-ն պետք է կռվելին միմյանց հետ : Ենհաստանին գըր-  
դուելով Գերմանիայի դեմ, նրանք յենթադրում ելին, վոր  
լեհ-գերմանական պատերազմը «կլերաճի» գերմանո-խորհը-  
դային պատերազմի, վոր Գերմանիան լեհաստանի հետ  
հաշվը մաքրելուց հետո կշարունակի առաջ շարժվել գեղի  
Արևելք : Բայց նրանք սիստմեցին իրենց հաշիվներում : Գեր-  
մանական կառավարությունը հասկացավ, թե դեպի ինչ-  
պիսի անդունդ են մզում նրան Արևմուտքի անկոչ խորհը-  
դատուները : Գերմանիան պատերազմի դուրս չեկավ ԽՍՀ  
Միության դեմ, այլ նրա հետ կնքեց չհարձակվելու պահա,  
վորը խաղաղության ամուր հիմք դրեց Արևելյան Յեփր-  
պայում :

Թվում եր, թե յեվրոպական պատերազմը, խոշորագույն  
կապիտալիստական պետությունների մասնակցությամբ,  
պետք է Աղղերի Լիդայի ուշադրությունը դրակիր : Բայց  
իրականում դուրս յեկալ հակառակը : Լիդայի պարագութ-  
ները վախենում ելին այդ հարցը քննության յենթարկելուց  
և խուսափեցին Աղղերի Լիդայի սեսիայի որակարգում այն  
գնելուց : Իսկ Խորհրդի և ասամբույյալի հերթական սե-  
սիան 1929 թ. սեպտեմբերից փոխադրվեց դեկտեմբերին՝  
«բարդացած միջազգային դրության» պատճառով : Ասենք,  
Լիդայի աերմաննետ անդործունեյությունն արդեն վոչ վոքի  
չեր զարմացնում : Դեպքերը յեվրոպական քաղաքականու-  
թյան ասպարիզում փոփոխվում ելին կինհմատողքաֆիական  
այնպիսի արագությամբ, վոր Աղղերի Լիդայի մասին հա-  
զիվ թե վորեն մեկը հիշում եր այդ որերին : Թերես միայն  
յերբեմն-յերեմն վորեն տեղում լրադրերի վերջին եջերում  
պատճում եր տեսնել պետիտով շարած հաղորդագրություն

այն մասին, վոր «լարված միջազգային գրության պատճա-  
ռով Աղղերի Լիդայի շրջանում քննարկվում և նրա նոտա-  
գայրը ժընկելից Բուենոս-Այրես փոխադրելու հարցը» և  
այլն :

Սակայն Աղղերի Լիդայի լետարգիական քունը հանկար-  
ծակի ընդհատվեց : Մի ակնթարթ նա նորից յերեան յեկավ  
յեվրոպական քաղաքականության նախարեմում և իր վրա  
դրավեց ամբողջ աշխարհի ուշադրությունը : Բավական եր,  
վոր Լիդայի պարագություններն սկսելին հակախորհրդային  
համականիա ծավալելը, վորպեսզի Աղղերի Լիդայի՝ տարի-  
ներով տևող անդործունեյությունը, պասսիվությունը նրան  
պատճաճ ծերության անրուժելի կաթվածից հանկարծ  
փոխարինվեր կայտառության ու յեռանդի հորդումով : Դեկ-  
տեմբերի 14-ի նիստում Աղղերի Լիդայի Խորհուրդն իր կազ-  
մից «Հեռացրեց» ԽՍՀՄ-ին : Այդ՝ միաժամանակ լոկից ու  
յերկուտ, ստոր ու ծիծագելի տկտը բաց և անում Աղղերի  
Լիդայի խոկական դեմքը : Իհարկե, ծիծագելի յեւ, յերբ 89  
ժիմոն բնակչություն ունեցող յերկու յերկրներ, շուլերու-  
թյան և Աղղերի Լիդայի կաղմի մեջ մտնող փոքր յերկրնե-  
րի վրա անպատճառ բռնություն գործադրելու միջոցով, վո-  
րոշում են գուրս բերում 183 միլիոն բնակչություն ունեցող  
պետությանը «Հեռացնելու» մասին :

Ճինքն իսկ կացությունը, վորի պայմաններում ընդուն-  
վել ե Աղղերի Լիդայի՝ ԽՍՀՄ-ի դեմ ուղղված բանաձեռ,  
ակնբախ կերպով մերկացնում և այն սկանդալային մեքե-  
նայությունները, վորոնց դիմել են իրենց նպատակին հաս-  
նելու համար անդու-ֆրանսական ներկայացուցիչներն Աղ-  
ղերի Լիդայում : Խնչակ հայտնի յեւ, Աղղերի Լիդայի Խոր-  
հուրդը բաղկացած ե 15 անդամներից, իսկ ԽՍՀՄ-ին «Հե-  
ռացնելու» վերաբերյալ բանաձեռի ողափին տրվել ե միայն 7  
ձայն, այսինքն՝ բանաձեռն ընդունվել ե Լիդայի Խորհրդի  
անդամների փոքրամասնության կողմից, Խորհրդի 8 ան-  
դամներ ձեռնպահ են մնացել կամ բացակա յեն յեղել : ԽՍՀ  
Միությանը «Հեռացնելու» ողափին քվեարկած 7 պետու-  
թյունների ներկայացուցիչների կադրմ ինքնին վկայում ե իր  
մասին — այդ յոթի մեջ մտնում են՝ Անդիման, Ֆրանսիան,

Քելլիան, Բոլիվիան, Յեղիպտոսը, Հարավ-աֆրիկական միությունը, Դոմինիկյան հանրապետությունը: 127 միլիոն բնակչության պատահաբեր ջոկված «ներկայացուցիչներ» 183 միլիոն բնակչություն ունեցող ԽՍՀՄ-ին:

Սակայն ժընեվի Փարասի կոմիկական կողմէ հետևող թաղնած ե «Հեռացման» տմբենեին ել վոչ-կոմիկական, իրական իմաստը: Խեղկատակների միմոսություն անելլ ժընեվի բարձանում՝ բնալ ել այնպիսի անմեղ զրադաւուք չե, ինչպես այդ կարող եթվալ առաջին խոկ հայացքից: Իրենք՝ խեղկատակները, յեթե նրանց ավելի ուշաբրությամբ նայելու լինենք, նման են վոչ այնքան անվնաս կլունների, վորքան քրեական-քաղաքական մեծ ստաժ ունեցող յեփած քաղաքական ջարդարարների, սակայն, նրանք ժողովրություն են անում վտանգավոր առարկաներով, վորոնք կարող են պայթել իրենց խոկ սեփական ձեռքերում:

Ժընեվի բեմադրությունը—դա հերթական հակախորհը դային զեմոնսարացիա չե միայն: Խոսքն այն մասին եր, վոր ուժերի փորձնական մոռիլիկացիա պատրաստեն ու կիրառեն պատերազմի շրջանակներն ավելի ես ընդարձակելու համար, վորին յեռանդադին կերպով ձգտում են ինչ-վոր «բարձր» վոլորտներ Լոնդոնում և Փարիզում: Խոսքն այն մասին եր, վոր գարվանիցացիի յենթարկեն Ազգերի Լիդայի գիտակը, նրան նոր կյանք ներշնչեն, հարություն տան Ազգերի Լիդային՝ նոր հիմքի վրա:

Խորհրդային ժողովուրդը յերեք չի գերազնահատել Ազգերի Լիդայի նշանակությունը: Այն չափով, վորչափով նա պատերազմին խոչընդոտող մի «թումբ» եր զեռես, Խորչըրդային կառավարությունը, հավատաբիմ լինելով խաղաղության համար մղած իր պայքարի քաղաքականությանը, մնում եր Ազգերի Լիդայում: Խորհրդային կառավարությունը խոչընդոտում եր իրեն պատերազմի գործիք գարձնելու փորձերին: Դեռ ավելին, Խորհրդային Միության ճնշման տակ, վորը հիմնվում եր Ազգերի Լիդայի ներսում յեղած խաղաղասեր տարրերի վրա և նրանից գուրս գտնվող ըսյն մասսաների վրա, Լիդան յերբեմն յերկշուր կերպով փոր-

ձաւմ եր մեղմացնել ոլատերազմի սպառնալիքը: Ազգերի Լիցայում ԽՍՀՄ-ի կողմից ի պաշտպանումն խաղաղության կատարվող յելույթները բազմիցս խորտակում ելին պատերազմի անդըն-Փրանսական հրձիկների խորամանկ կոմընացիաներն ու ինտրիկները: Ազգերի Լիդան, վորպես պրոլոկացիայի ու պատերազմի գործիք ոգտադրծելու համար հարկավոր եր մեջտեղից հեռացնել Խորհրդային Միությունը: Այդ արվեց ամենայն կոպառթյամբ, վորը հիշեցնում է 1920 թվի պրիմներն ու լեզուն: Բայց համաշխարհային պատերազմի անդլիկական հրձիկները մոռացել են, վոր այժմ այն ժամանակը չի: Խորհրդային Միության հեղինակությունը, ուժը, միջազգային նշանակությունն անչափելիորեն ավելի բարձր ե, քան այն տարիներին եր: Խորհրդային Միության հետ բուրբոնների լեզվով խոսելու ամեն մի փորձ վոչ միայն ծիծաղելի յե, այլ և ոխակոտ բան և չափն անցկացրած պոլիտիկանների համար:

Անդլիկական իմպերիալիստների կողմից հակահեղափոխական ըլոկ կարգակերպելու փորձը ձախողվեց: Բայց անդլո-Փրանսական ուազմական ըլոկը ձգտում եր միայն մի բանի. ԽՍՀՄ-ին «հեռացնելուց» հետո արդեն վոչինչ չի խանդարում, վոր Լիդան դառնա ուազմական քաղաքականության դորձիք, նոր համաշխարհային իմպերիալիստական պատերազմ հրահրելու միջոց:

ԽՍՀՄ-ին Ազգերի Լիդայից «հեռացնելու» առիթ հանդիսացալ ԽՍՀՄ-ի կարծեցյալ «աղբեսիան» Ֆինլանդիայի գեմ: Այդ հերյուրանքի ծիծաղելիությունը և անհեթեթությունը միանդամից ենթ աչքի յե գարնում: ԽՍՀՄ-ն միշտ հարդել և ֆինլանդիայի անկախությունը: Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունից հետո միայն Ֆինլանդիան դարձավ անկախ: Սակայն, հենց այն պատճառով, վոր ԽՍՀՄ-ն պաշտպանում ե Փիննական ժողովրդի ազգատությունն ու անկախությունը, նա չի կարող հանդուրժել, վոր սպիտակ-գրկարդիական բանդան, վորը յերկրում զավթել ե իշխանությունը, այդ յերկիրն ուսարերկրյա իմպերիալիստներին վաճառի, այն դարձնելով զինված պլատզարմ Խորհրդային Միության դեմ պատերազմ մղելու

Համար : Ֆինլանդիայի անկախության թշնամին վոչ թե Խորհրդային Միությունն է, վորը Փիննական ժողովրդին սպնում է՝ Ֆինլանդիայի իսկական անկախության, ազատության և դեմոկրատիայի համար—նրա կողմից մզվող կռվում, այլ սպիտակ-գվարդիականների դավաճան բանդան—ջաները, Մաններհայմը և Ընկ., վորոնք յերկիրը դարձրել են ոտարերկրյա իմպերիալիզմի պլացդարմ, պատերազմի ամենավտանգավոր ոջախը՝ դեպի Խորհրդային Միություն տանող մատուցներում, մասնավորապես դեպի Լենինգրադ տանող մատուցներում :

ԽՍՀՄ-ն Ֆինլանդիայի դեմ պատերազմ չի ուզում և չի մզում : Խորհրդային Միության կառավարությունը բանակցություններ եր վարում Փինլանդական նախկին կառավարության հետ և առաջադրում եր մի շարք առաջարկներ, վորոնք ուղղված եյին ինչպես ԽՍՀՄ-ի, նույնպես և հենց իր՝ Ֆինլանդիայի անվտանգության ամրապնդմանը : Այդ առաջարկների մերժումը Փինլանդական նախկին կառավարության կողմից՝ ցույց տվեց, վոր նա չեր ուզում ԽՍՀՄ-ի հետ համաձայնության դաշտ, չեր ուզում ապահովել Ֆինլանդիայի անկախությունը և մտադրություն ուներ Ֆինլանդիան պահել վորպես ոտարերկրյա իմպերիալիզմի պլացդարմ : Ֆինլանդական նախկին կառավարության այդ դիրքը մերկացնում է նրա իսկական, հակածողովրդական, դափանանական բնույթը : Նրա այդ դիրքն առաջ բերեց Ֆինլանդիայում ամենաուժեղ վրդովմունք, ժողովրդական լայն շարժում սպիտակ-գվարդիական ավանդուրիստների դեմ, վորոնք յերկիրը քաշում եյին դեպի կործանում : Այդ շարժման հետևանքով կազմվեց Ֆինլանդական դեմոկրատական հանրապետության ժողովրդական կառավարություն, վորը վերջ տվեց Ֆինլանդիայի նախկին կառավարության դավաճանական քաղաքականությանը, ոտարերկրյա իմպերիալիզմի գործակալությանը, և ԽՍՀՄ-ի հետ 1939 թ. դեկտեմբերի 2-ին փոխադարձ ողնության պակտ կնքեց : Այդ պակտը խաղաղության և անվտանգության հաստատուն հիմք և ստեղծում հյուսիս-արևելյան Յելլուպայում, կարգավորում է նոր հիման վրա հարաբերությունները յերկու յերկրների

միջև ու ուսալ կերպով ապահովում է Ֆինլանդական հանրապետության անկախությունն ու տերիտորիալ անձեռնմխելիությունը : Պակտը լուծում է նաև լեզվի ու կուլտուրայի ընդհանրությամբ իրար հետ կարված Փինլանդական և կարելական ժողովուրդների միավորման պրոցեսը : Այդ վորոշումը, վորն ընդդառաջ է դնում Փիննական ժողովրդի գարավոր իղձերին, ակնառու կերպով ցուցադրում և ԽՍՀՄիության քաղաքականության անշահախնդիր բնույթը, ԽՍՀՄ-ի, վորն ամեն կերպ պաշտպանում և վորքը ժողովուրդների ազգային անկախությունը :

Խաղաղության բոլոր բարեկամները վորջունեցին յերկու յերկրների միջև փոխադարձ ողակտի կնքումը, վորը հաստատուն բազա յե ստեղծում բարեկամական հարաբերությունների համար՝ նրանց միջև, և վորը չափազանց ձեռնուու յե Ֆինլանդիայի համար : Այլ կերպ վերաբերվեցին պակտին պատերազմի հրձիգները : Տեսնելով, վոր իրենց ձեռքից դուրս ե գալիս սպիտակ-գվարդիական Ֆինլանդիան, նրանք վայրենի վոռնոց բարձրացրին Խորհրդային Միության «աղբեսիայի» մասին և ողնության հասան Խաններհայմի բանդային : Զդուելով Ֆինկանդիան վորպես բազա ողտադրել ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու համար, նրանք մինույն ժամանակ փորձում եյին ԽՍՀՄ-ի վրա դցել Ֆինլանդիայում սկսված ուղմական գործողությունների պատասխանառությունը : Իզո՞ւր ջանքերը : Նրանց չի հաջողվի քողարկել ծանրադաշտույթի այն անլուր հանցագործության համար, վոր նրանք կատարեցին Փիննական ժողովրդի վերաբերմարը, վորին նրանք զոհաբերում են անզլիական, Փրանսական և տմերիկյան բանկիրների շահերին : Խորհրդային և Փիննական ժողովուրդները խորին ատելությամբ են վերաբերվում չփոթված քաղաքագետների կեղառու խաղըն : Այդ խաղն արժանի յե աշխարհի բոլոր յերկրների բոլոր աղնիվ մարդկանց ատելությանը :

Անդու-Փրանսական իմպերիալիստները վճռել են Ֆինլանդիայում իրենց սլրովոկացիայով առաջացած դեմքերն ողտադրել Ազգերի լիդայում ԽՍՀՄ-ի ներկայությունից աղատվելու համար : Ազգերի լիդայում ԽՍՀՄ-ի ներկայու-

թյունը կաշկանդում եր պատերազմի հրձիղների գործողությունների ազատությունը: Խորհրդային Միությանը չհաջողվեց Ազգերի Լիդան զարձնել խաղաղության խակական գործիք, վորին նա ամբողջ ժամանակ ձգտում եր, բայց Ազգերի Լիդայում նրա ներկայությունը խանդարում եր, արդեւակում եր Լիդան պատերազմի հրահրժան գործիք դարձնելուն: Յեր անհաջողության մատնեցին ԽՍՀՄ-ի ու Գերմանիայի միջև պատերազմ բորբքելու փորձերն Անդվեայի ու Ֆրանսիայի կողմից, վերջիններս վճռեցին Ազգերի Լիդան ողակործել իրենց նպատակներն իրականացնելու համար: Բայց դրա համար հարկավոր եր աղատվել ԽՍՀ Միությունից, վորի ներկայությունը ժընելում՝ կաշկանդում եր պատերազմի հրձիղների ձեռքն ու վոտքը: Յեվահա լոնդոնյան ու փարիզյան ուժիսյորները ժընելում ցուցադրում են (ահշենիրյուտ) ԽՍՀՄ-ին «Հեռացնելու» վայրենի ու վողորմելի Փարսը: «Հեռացման» բեմադրումը կատարվեց չտեսնված կոպիտ, անչնորհք ու անմիտ կերպով: Ազգերի Լիդայի Խորհրդի 15 անդամներից մի յերբորդն ասամբլեայի կողմից ընտրվել եր Փինլանդական նախկին կառավարության ամելացիան Խորհրդի կողմից քննության առնվելու նախորյակին և բուն այդ որը: Խորհրդի նորընտիր անդամների կազմը նախապես նենդադարսել եյին Լիդայի պարագլուխները: Ժընելյան ուժիսյորները Խորհրդի նորընտիր անդամներից պահանջեցին պարտավորություններ, վորպեսի նրանք ԽՍՀՄ-ին հեռացնելու դեմ չքվեարկեն: Հարկավոր յեղան այդպիսի չլսված, դիկտատորական ժեթողներ, վորպեսի Խորհրդի միջոցով անցկացնեն «միաձայն» վոտումը ԽՍՀՄ-ին հեռացնելու ողտին: Մենք արդեն տեսանք, վոր այդ «միաձայնությունը» նշանակում ե 7 ձայն՝ 15-ից: ԽՍՀՄ-ին Ազգերի Լիդայից «Հեռացնելու» պլոցեգուրան ակնբախ կերպով ցուցադրում ե, թե ինչպիսի անպատկառությամբ անդլո-Փրանսական իմպերիալիստները քամահրում են վոտքը յերկրներին, նրանց յենթարկելով իրենց իմպերիալիստական շահերին:

Լոնդոնի ու Փարիզի հետ մեկտեղ այդ գործին «իր ձեռքը զարկեց» նաև համաշխարհային պլուտոկրատիայի

յերբորդ (ըստ կարդի, բայց, թերեւ, նշանակությամբ առաջինը) կենտրոնը—Նյու-Յորքը: Ամերիկյան բանկիրները հանկարծ քնոքուշ զգացմունքների բուռն տենդով բռնվեցին մաներհայմական ֆինլանդիայի նկատմամբ:

ԱՄՆ-ը Ազգերի Լիդայի անդամ չեն: Սակայն նրանք քիչ ողգեցություն չեն գործում այդ պատվարժան հաստատության վրա, մասնավորապես Լատինական Ամերիկայի այն ցերկրների ներկայացուցիչների միջոցով, վորոնք Ազգերի Լիդայի մեջ են մտնում: Ճիշտ ե, վերջին յերկու-յերեք տարում այդ պետություններից քչերը չհեռացան Լեմանի լճի ափին գտնվող Լիդայի պալատի շքեղ դահլիճներից, գտնելով, վոր իրենց բավական ե մի տերը (ԱՄՆ) և վոր ունենալ ելի յերկու տեր (Անգլիա և Ֆրանսիա)—չափից գուրս շառայլություն ե, վորը նրանք չեն կարող իրենց թույլ տալ: Սակայն Լատինական Ամերիկայի մոտավորապես մի տասնյակ յերկրներ գեռ մինչեւ օրս ել մնում են Ազգերի Լիդայի անդամներ, վորի մեջ նրանք Ուոլլ-Ստրիտի գործակալության դեր են խաղում: Ուստի և զարմանալի չե, վոր հատկապես այդ յերկրները նախամարտիկների գեր խաղացին ժընելում կատարված հակախորհրդային պրովոկացիա-յամ:

Իսկ ինչո՞վ բացատրել այն սրտառուչ հոգատարությունը, վոր ԱՄՆ-ը ցուցաբերում ե սպիտակ-գվարդիական ֆինլանդիայի վլճակի նկատմամբ:

Ամերիկյան կալիտալիստները պատերազմի չնորհիվ ավելի շատ են վաստակում, քան վորեւ այլ յերկրի կապիտալիստները: Բայց այդ նրանց համար քիչ ե: Միլիոններ շահելով նրանք յերազում են միլիարդների մասին: Իսկ դրա համար նրանց հարկավոր ե խսկական «մեծ», համաշխարհային պատերազմ, յերկարատեւ ու արյունահեղ պատերազմ, վորը սրահանջ կներկայացնի միլիոնավոր տոնն մետաղի, նավթի, ածխի համար, տասնյակ-հազարավոր ինքնաթիւների, տանկերի, թնդանոթների և մահվան ու բնաջնջման այլ դործիքների համար: Ահա թե ինչու Ուոլլ-Ստրիտը համաշխարհային պատերազմի հրահրժան զլխավոր ոջախներից մեկն ե: Կառավարական դեկլարացիան չեղոքության մա-

սին և ամերիկյան գործարար աշխարհի ներկայացուցիչների պացիֆիստական շաղակրատանքը չեն կարող թափցնել այդ «խաղաղաբարեների» խելական գեմքը: Առաջին իմպերիալիստական պատերազմի ժամանակ նույնպես նրանք խսում ենին խաղաղության մասին, բայց վերջացրին նրանով, վոր 1917 թվին հարեցին անզլո-ֆրանսական ռազմական բլոկին, իսկ մի տարի հետո Անզլիայի ու Ֆրանսիայի հետ միասին կազմակերպեցին ինտերվենցիա Խորհուրդների Յերկրի գեմ:

Ամերիկյան «չեղոքությունը» վոչ այլ ինչ է, քան յիթե քաղաքական Փիլցիա, «դանիական թագավորի» հռչակավոր «զգեստի» նման մի ինչ-վոր բան: Ինչպես վոր այդ զգեստը չեր կարող ըրջապատռների աչքից թագցնել թագավորի մերկությունը, այնպես ել ամերիկյան «չեղոքության» թափանցիկ շիրմայի միջից դժվար չե Ռուլ-Ստրիտում նկատել նոր համաշխարհային պատերազմի հրահրման ոջախը:

ԽՍՀՄ-ին լիդայից «հեռացնելու» վորոշումը, այդ Փարսի ուժի խոյրների մտքով, ուետք և խախտեր ԽՍՀՄ-ի միջադրային դիրքերը և նրա միջադրային հեղինակությունը: Սակայն Ազգերի լիդայի չափն անցկացրած պարագային հեղինակությունը: Սակայն միջադրային դիրքերի չափանիկ համառակա հետեւանքների: «Հարաբերությունների խորումը» մի հաստատության հետ՝ վորը վերջին ժամանակս իրեն այնքան վարկարեկեց՝ համառ կերպով սարոտածի յենթարկելով խաղաղության գործը, և այժմ մերկացրեց իր լիակատար կախվածությունը անդլո-ֆրանսական իմպերիալիզմից, —ամենևին չի նվազեցնում ԽՍՀՄ-ի հեղինակությունը ամենալայն մասսաների մեջ: Լիդայի իմպերիալիստական զեկավարների գործողությունները նպաստում են պատերազմի հրահրման նրանց քաղաքականությունը մերկացնելուն: Դրանով ել հենց դեմարկացիոն դիմքը պատերազմի հրձիկների ու խաղաղության կողմնակիցների միջև անց և կացված ավելի ևս պարզորոշ ու կորուկ կերպով, քան առաջ:

Խղումն Ազգերի լիդայի հետ՝ ունի նաև այն առավելությունը ԽՍՀՄ-ի համար, վոր, կապված Աբներով Ազգերի լիդայի կանոնադրության հետ, ԽՍՀՄ-ն այսուհետեւ վոչ մի պատասխանատվություն չի կրում նրան անփառունակ գործերի համար:

Աչա թե ինչու ԽՍՀՄ-ն այնպիսի սառն արհամարհանքով «ընդունեց ի գիտություն» Ժընկվան խեղկատակների հերթական արտասոց վարմունքը: Նրանք հույս ունեցին մեկ վախեցնելու, բայց նրանք դառնապես հիսութափելու յին: Խորհրդագյուղին ժողովուրդը սպառնալիքներից չի վախենում և սպառնալիքների հանդեպ չի նահանջում: Խաղաղության քաղաքականությունը, Փինլանդական ժողովրդին ոգնություն ցույց մալու և նրան իմպերիալիզմի շղթաներից աղատելու քաղաքականությունը Խորհրդագյուղին Միությունը հաստատակամուրեն շարունակելու յի, չնայելով և վոչ մի հաստատակամուրեն շարունակելու յի, չնայելով և ամերիկյան և այլ քաղաքական կուլուրաներում: Քաղաքություն կուլուրի՝ Ժընկվան և ամերիկյան կուլուրաներից պահպանի ոջախը, վոր ստեղծել և Մաններհայմի-Տանների վոճարագործ շայկան, պետք և վոչնչացվի և կիրաքնչացվի: Ցինլանդական ժողովուրդը Կարմիր Բանակի ուղնությամբ կարտաքսի իր դաշիճներին և ոտարերկրյա իմպերիալիզմի գործակալներին ու կապրի ազատ, դեմոկրատական, անկախ Ֆինլանդական հանրապետության մեջ:

ԽՍՀՄ-ն այսուհետեւ ել շարունակելու յի իր համառ պայքարը խաղաղության համար, անխնա մերկացնելով պատերազմի հրձիկների գալիքները ու ինտրիգները: Յեզ աշխարհում վոչ մի ուժ չի կարող Խորհուրդների Յերկրին հարկադրել չեղվելու այն ուղղուց, վորով նրան տանում և համաշխարհային պրոլետարիատի տասնորդը—ընկեր Ստալինը՝ դեպի նորանոր հաղթանակներ:



**Թարգմ.** Հ. Տովմաննիսյան  
Խմբ. Ա. Արմենյան  
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան  
Մրգագրիչ Վ. Զիդյանյան  
Կոնսորտ ուրբագրիչ Լ. Արուլյան

Քաղաքական գրականության պետական հրատարակչության  
առաջարան, Ցերեան, Ալլահվերդյան № 65

26      *S. u.*      *S. u. l. m. d. k.*      *q. k. n. p. k. l. l. b. n. l.*

ԱՐԴՅՈՒՆՎ



ԳՐԱՅԻ 50 Կ.

П. ЛИСОВСКИЙ  
ЛИГА ПОДЖИГАТЕЛЕЙ ВОЙНЫ  
Государственное издательство политической литературы  
Ереван • 1940